

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԿԿ

№ 6
JUN
1931
PARIS (France)

«ՀՈՅ ՏԵՂՈՓՈՒԹՎՈՆ ԴՈՂՆՈՎՑՈՒԹԵՈՆ» ՕՐԳՈՆ

ԱՅՍՊԷՍ Է ԳՐՈՒԱԾ ԽՆԴԻՐԸ

Ապրիլից սկսած եւ մինչեւ այսօր «բուլչե-
ւիկեան հասարակայնութիւնը» Հայաստանում
մեծ իրարանցման մէջ է. անվերջ միախնդներ,
ճառեր, բանաձեւեր, դատավճիռներ, յօդուած-
ներ, հայճոյանք, ատամների կրճատց, աղմուկ
ու ժխոր...

Ի՞նչ է պատահել: Ի՞նչ նոր գիտ եւ արել
լենինեան Չեկայի արթուն պահակները: Ի՞նչ
նոր ճակատ է բացել, ի՞նչ թշնամի յայտնա-
գործւել «աշխարհի առաջին կոմունիստական
հանրապետութեան» դէմ...

Թշնամին այս անգամ մէկ չէ, երկու չէ՝
չատ է — «անգլիոֆրանսական իմպերիալիզմը»
Առաջաւոր Ասիայում, «քրդական չէյիերն» ու
միապետական Կիրիլը խորհրդային սահման-
ների վրա, գիտնականներ, մտաւորականներ
ու մասնագէտներ ներքը, կուրակներ, «ձախ
քեալագէտներ», «աջ օպորտունիստներ» եւ,
իրքեւ համադրութիւն այս բոլորի, Դաշնակ-
ցութիւնը իր «ինտերւենցիոնիստական» սոս-
կայի ծրագիրներով...

Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ քուն ու հան-
գիտ չի տալիս բուլչեւիկներին, այս անգամ
երեւում է նոր դերով, որպէս հակաբուլչեւիկ-
եան ուժերի միացնող եւ առաջնորդ փոքր-
ասիական «պլացդարմում»: Եւ ո՞վ ասեւ չէ
միացած Դաշնակցութեան դրօշակի տակ. եւ
անգլիացի հաստճակատ լորդը, եւ Ֆրանսացի
ազահ իմպերիալիստը, եւ քիւրդ յետադիմա-
կան աշիդէթապետներն ու հակաքեմարական
Թիւրք փաշաները, եւ մուսուաթականներն ու
վրացի մենչեւիկները, եւ — ո՞վ սարսափ —
ու «ամենայն իրուսաց Կիրիլ թագաւորը»...
Ամենքը թա՛րւել են Դաշնակցութեան հզօր մա-
կանի տակ ու միացալ ճակատով պրո՛ւ է գործ եւ
տալիս «սոցիալիզմի կառուցումը աւարտող»
խորհրդային իշխանութեան վրա:

Աւսած է՝ վախի աչքերը մեծ կը լինեն:
Սորհրդային իշխանութիւնը սարսափահար ու

խուճապի մտնում՝ ամէն թփի տակ մահա-
ցու վտանդ ու թշնամի է տեսնում: Եւ սոս-
կումով բռնւած՝ ընկնում է զատոնցանքների
մէջ. Պօղոս Նուպար, Կիրիլ, Դաշնակցու-
թիւն...

Ծիծաղելի կը լինէր, ի հարկէ, զբաղւել
ըստ էութեան բուլչեւիկ դեկաւարների հիւանդ
մտքի արտադրած անհեթեթութիւններով:
Ո՛ւմ յայտնի չէ, որ Թիւրքահայաստանում ու
Քիւրդիստանում տեղի ունեցող շարժումները
քնաւ ի նկատի չունեն Սորհրդային Միութիւ-
նը եւ ուղղւած են բացառապէս Թիւրքական
արիւնոտ տիրապետութեան դէմ՝ Հայաստանի
եւ Քիւրդիստանի ազատութիւնը իրականացնե-
լու նպատակով: Ո՞վ չգիտէ, որ Դաշնակցու-
թիւնը դուրս է հակախորհրդային «պլաց-
դարմների» քաղաքականութիւնից եւ որեւէ
յարաբերութիւն չունի ոչ հաստաճակատ ու ոչ
էլ բարակճակատ լորդերի հետ, ո՛չ Ֆրանսա-
ցի, ո՛չ էլ Ուրիշ «իմպերիալիստների», ո՛չ
Թիւրք փաշաների, ոչ էլ, առհասարակ, խոր-
հրդային տիրապետութեան դէմ դուրս լա-
րող որեւէ ուժի հետ: Հ. Յ. Դաշնակցութեան

քաղաքականութիւնը Սորհրդային Միութեան
եւ Հայաստանի բուլչեւիկ տիրապետութեան
հանդէպ, ինչպէս եւ Մերձաւոր Արեւելքի գոր-
ծւում աւելի քան յստակ է եւ ո՛չ մի չեկիս-
տական սաղրանք չի կարող պղտորել ու խախ-
տել նրա որդեգրած ուղեգիծը: Եւս առաւել
հարեան Պարսկաստանի, կամ Իրաքի ու Սիւ-
րիայի արաբ ժողովուրդները եւ իշխանու-
թիւնների հանդէպ, հակառակ բուլչեւիկների
թափած բոլոր ճիգերի ու պրովոկատիոնների,
Դաշնակցութեան ընթացքը, ինչպէս անցաւ-
լում, այսօր էլ, վաղն էլ միշտ բարեկամական
է: Եւ ուրիշ կերպ չի էլ կարող լինել, եւս
Պարսկաստանում, եւս արաբական աշխարհում:
Հայ ժողովուրդը ո՛չ մի քաղաքական նպատակ
չունի եւ միշտ վայելել ու վայելում է հերա-

սէր ու արեւացական վերաբերում այդ երկրներում Միւս կողմից՝ պարսիկ եւ տարր ժողովուրդների ազատութիւնն ու բարգաւաճումը չեն կարող համակրանքով չդիտուել Դաշնակցութեան կողմից, որ ամէն տեղ ստոյեան է ազատութեան ու յառաջդիմութեան:

Այս ամենը պարզ է արեւի յոյսի պէս: Այս արտաբերւած չէ նոյնպէս եւ Հայաստանում մասնաշահութեան բարձրորակ մտաւորականութեան եւ մասնաշահութեան բարձրագոյն կեցւածքն ու հասարակական ծառայութիւնը խորհրդային իշխանութեան: Այդ բոլոր Աճառեանները, Արեւելեանները, Կամսարակները, Մանանդեանները ու Շելկովիիկեանները — կարելի է մի որոպէ կասկածել, որ նրանք անհաւատարիմ են խորհրդային իշխանութեան: Չկայ կասկածի եւ ոչ մի հիմք, բայց եւ այնպէս Հայկումկուսը անօրինակ զլազրգուութեան եւ իրարանցումի մասունած՝ կատարել տրչաւանք է սկսել եւ նրանց դէմ: Արշաւանք եւ պաշտօնազրկում:

Եւ այսպէս բոլոր «Փրոնտներում». կասկած, խուճապ, դա՛ւ, թշնամի, հայհոյանք, սպառնալիք, պատիժ եւ խժալուր . աղմուկ: Ի՞նչ է պատճառը: Ի՞նչ է պատահել: Ի՞նչ կայ:

Պատճառը, ի հարկէ, ո՛չ Հ. Յ. Դաշնակցութիւնն է, ո՛չ Հր. Անառեանն ու Ստ. Կամսարականը, ո՛չ էլ Պօղոս փայտ Նուպարը իր գերեզմանում: Պատճառը այն անէրն է, այն մտայլ փակուղին, որի մէջ անգործ կարտում է խորհրդային իշխանութիւնը եւ չի կարողանում դուրս գալ: Պատճառը Ստալինեան բրդնափարութեան ծնունդը տաւած այն ստարակայկան պայմաններն են, որոնց հանդէպ անգործ է նոյնիսկ արիւնդուտ Չեկան: Տեսէք թէ Հայաստանի պաշտօնաթերթում ի՞նչ գոյներով են ներկայացուում այդ պայմանները:

«Այսօր մենք ապրում ենք կարեւորագոյն մի ժամանակ: Այսօր իր գլուխը է բարձրացնում ոչ միայն արտաքին թշնամին, այլ եւ մեծապէս ակտիւացել է նաեւ ներքին թշնամին — կուլակը, վնասարարը, ազգայնական հոգեբանութեան բացայայտ եւ ֆօպարկած արտայայտիչը: Այսօր մեր երկրում իր իշխուրդային աշխատակն է կատարում նաեւ Դաշնակցութեան ծպտեալ գործակալը: Ուրիշային կիրիլ քապուտից մինչեւ քրդական շէյխը, անգլիա-ֆրանսիական իմպերիալիզմից մինչեւ մեր ամենայնու ընկած գիւղի կուլակն ու չարչին, վնասարար Ռամզիններից մինչեւ գանազան տիպի եւ գոյնի վախան Փափագեանները եւ, վերջապէս, Հոսովի Պապից սկսած մինչեւ մեր կօպերացիայի եւ խորհրդային ապարտի ամենախղճուկ վնասարարն ու ամենաչարամիտ գեղծարարը — սրանք բոլորն էլ մի ֆրոնտ են, մի հոգեբանութիւն, մի մտայնութիւն եւ՝ — կործանել խորհուրդների իշխանութիւնը, ջլատել բանուր դասակարգի յե-

ղախիտական կամքը եւ վերականգնել հինը, թէկուզ ինչ գնով էլ որ լինի: Այսպէ՛ս է դըրւած խնդիրը: «Ո՞ւ. Հայաստ.» 26 մայիս):

Միանգամայն ճիշտ է. այսպէ՛ս է դրւած խնդիրը: Այսինքն՝ ահաւոր տապնայի ծանրութեան կենտրոնը այն ներքին հակասութիւններն են, որոնք սրել են այնքան, որ այլ եւս «մի Փրոնտ, մի հողեբանութիւն, մի մրտայնութիւն» է ստեղծուել ընդդէմ կոմունիստական բռնապետութեան: Իսկ «ներքին հակասութիւնները» իրօք որ զարհուրելի են:

Ահա երեք տարի է ամբողջ երկիրը, բացի մի խումբ հրամայող բուլեւիզներէ, ժողովուրդը իր բոլոր խուճեղք, մասունած սովի ու տանջանքի, «սոցիալիզմ-է կառուցում». ինչ որ կայ երկրի ներսը արժէքաւոր՝ վաճառքի է տարւում արտասահման, որպէսզի դրամ ձարւի «հնգամեայ ծրագրի» եւ համաշխարհային յեղափոխութեան կարիքների համար: Իայց համաշխարհային յեղափոխութիւնը, կապոյտ թոշուների պէս, աւելի եւ աւելի խուսափում է կրեմլի տեսողութիւնից, իսկ «հնգամեակը» կործանում է երկրի ժողովրդական տնտեսութեան հիմքերը եւ ճորտերի ու ըստրուկների վերածում աշխատանքական բանակները:

Հնգամեակի երրորդ տարին տնտեսական աւելրի, նիւթական ու բարոյական քայքայման զբաղթանակ է խորհրդային տիրապետութեան սահմաններում. գործարանային բանուրութեան հարստահարութիւն քաղաքներում, աշխատանքի ճորտային պայմաններ, անօթութիւն, դրամի արժէքի ծայրայեղ անկում, անօրինակ քառս արտարարանաւոր ու հաղորդակցութեան միջոցների բնագաւառում եւ այս հողի վրա դժգոհութիւնների արագ աճում, խմորումներ ու ցոյցեր բանուրական շրջաններում, ձերբակալութիւններ, բանտ, զանազամային աքսորներ ու չեկայական ահաբեկում ամէն կողմ:

Նոյն երեւոյթը եւ գիւղերում. բոնի «կուլխոզացիա» եւ, իբրև հետեւանք անհատական տնտեսութիւնների վերացման եւ անհատական նախաձեռնութեան արգելք, երկրագործութեան սննախրնթաց անկում: «Քայլերեկեան տեմպեր» գիւղատնտեսութիւնը «համայնական բելսերի» վրա դնելու գործում, բոնի «կոնտրակտացիաներ», « կուլակաթափութիւն », աներեւակայելի շահատեսութիւններ բարձրակազմութեան, հացամթերման, մամթերման, կօպերացիայի ասպարէզներում եւ խորհրդային տնտեսութեան միւս ճակատների վրա: Եւ իբրև հետեւանք, յաճախակի բմբոսուտայումներ, պատասխանատու գործիչների ու բանիջլթակիցների սպանութիւններ, գիւղերում, կանանց ցոյցեր ու յարձակումներ չեկիսաների վրա, հողամշակութեան կրճատում, գիւղատնտեսութեան որակի անկում, անա-

սունների ոչնչացում, գործիքների փչացում, ճորտատիրական կարգերի հաստատում գիւղերում, խառնակութիւններ կարմիր՝ բանակում, ուսանողական խռովութիւններ, բռնութիւն, աքսոր — ընդհանուր դժգոհութիւն, համատարած չիտթ ու խուճապ...

Նոյն է պատկերը եւ հասարակական միւս խաւերում, երկրի կենսիքի բոլոր բնագաւառներում: Ընդհանուր աղքատութիւն, անտանելի հարկեր, ճնշում ու բռնութիւններ մշակոյթի եւ արւեստի ասպարէզում, խելացնորութիւններ պրոցներում ու բարձրագոյն վարժարաններում, գոհնէկ հալածանքներ կրօնի դէմ, ամառութիւն մամուլի մէջ, մտաւոր անպատ, «աջ»-ի ու «ձախ»-ի կատաղի պայքար Կոմկուսի ծոցում, մտածելու կարողութիւն եւ խղճի վերջին բեկորները զեռ չկորցրած կոմունիստների վտարում պատասխանատու պաշտօններէջ եւ, յաճախ, աքսոր երկրից դուրս, ստալինեան իրձիկների հաստատում կառավարական բոլոր գիւրքերում, խորհրդային ապարատում եւ անտեսութեան ու մշակոյթի բնագաւառում, ստեղծական ուժերի կատարելալ սպառում, հաւատի վերջնական խախտում, բարբերի փլուզում, ընդհանուր յուսալքում — ահա բոլշեւիկների ստեղծած կացութեան տժգոյն պատկերը Սորհրդային Միութեան սահմաններում, բայց, մանաւանդ, Հայաստանում:

Այսպիսի պայմաններում զարմանալի չէ, որ ամէն կողմ պոռթկում է զայրոյթը. բան-

ւորութիւնն ու գիւղացիութիւնը, այլեւս չի կարողանում, չի ուզում համբերել եւ հազար ձեւերով արտայայտում է իր բողոքը, անդամ աղմկոտ ցոյցերի ու գործադուլների միջոցով: Եւ սարսափահար իշխանութիւնը պատասխանատուներ է որոնում, իր տիրապետութիւնը բռնութեամբ ու խաբէութեամբ պահող Կոմկուսը նոր ճիգ է անում հանրային ուշադրութիւնը մոլորեցնելու եւ իր դէմ լեռնացող զայրոյթը ուրիշ կողմ ուղղելու: Այդ ինքը չէ յանցաւորը, ո՛չ, որ երկիրը քար ու քանդ է լինում, որ իր լծի տակ ճնշւած ժողովուրդը հաց չունի ուտելիք, հագուստ չունի հագնելիք, բնակարան չունի եւ դատապարտւած է աշխատել ևզի պէս: Յանցաւորը Իշխանակութիւնն է, Պօղոս Նուպարը, Կիրիլը, քիւրդերը, Հոովմի Պապը — ամենքը բացի իրենից, որ անմիջական պատասխանատուն է երկրի ու ժողովրդի ճակատագրի համար: Ծարպիկ գողի պէս ուրիշի օձիքից է բռնում, այն ինչ աշխարհ էլ գիտէ, իր հարստահարած ու ըստըրկացրած ժողովուրդն էլ գիտէ, որ համատարած աւերի ու թշուառութեան միակ պատճառն ու պատասխանատուն Կոմունիստական Կուսակցութիւնն է եւ Ստալինեան դժգոհութեան բռնավարութիւնը՝ իր Չեկայով, իր հնգամեակներով, իր կոլխոզներով, իր «բայլշեւիկեան տեմպերով»: Գանի այս դրութիւնը չէ փոխւած — դարման չկայ: Չի կարող լինել եւ խղաղութիւն ու շինարարութիւն:

Այսպէ՛ս է դրւած խնդիրը:

Մայիսեան ապստամբութեան հետեւանկները

Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը, որ կը զբաղադրիկ 1918-ի Մայիս 28ին, Հայոց քաղաքական կենսիքի մեծագոյն երևոյթն է, լուսաւոր եւ վերածնիչ իր հետեւանքներով: Վերածնունդը, որ կարճ ըրջանը, ամէն տարի, տարիւիցիս, երբ կը տօնվը՝ անոր արժէքները հայ ժողովրդին սեփականութիւն դարձնելու (արժէքներ, որոնք մեր ապագայ յոյսերուն կուանը կը կազմեն), նոյնքան մտահոգութեամբ կանդաղադառնանք այն չարաչա պատճառներուն, որոնք Հայաստանի մանուկ պետութիւնը կործանեցին: Այդ պատճառներէն մէկը, — ես կը համարձակիմ ըսել զբխաւորը, — հայ բոլշեւիկներու մայիսեան ապստամբութիւնն էր:

Եթէ 1918ի Մայիս 28ը հայկական խաւար կենսիքը ջերմ ճառագայթով մը կը լուսաւորէր, 1920ի մայիսին, բոլշեւիկեան ապստամբութիւնը հայկական պետութեան հիմնաքարեր կը խախտէր, ապալին չէնքը խարխուլ դարձնելով:

Մեր այս պնդումն ապացուցանելու համար դիմենք պատմութեան: Ու անոնք, որ մակերեսային ծանօթութիւն մ'ունին այդ անցքերուն վրա, հայ բոլշեւիկներն հայ ժողովրդի «փրկիչ» հռչակելէ առաջ, լու կըլլար որ մտիկ ընէին պատմութեան անողոք դատաստանները:

Ի՞նչ քաղաքական պայմաններու մէջ եւ ի՞նչպէս ստեղի ունեցաւ հայ բոլշեւիկներու ապստամբութիւնը: Քաղաքական պայմանները ծանօթ են բոլորին, բայց նոր խիկար իմաստուն ձեւանալու ատեն, անհրժեշտ է, որ անգամ մը խ պատահերացնեն 1920-ի զարման քաղաքական ընդհանուր կացութիւնը: Ռուսաստանը շտակալեան քաղաքացիական պատերազմի մէջ էր. Վրաստանը կը մտար անկախ: Թիւրքիոյ արմատական անգամահատութիւնը գործնականապէս իրականացաւ էր մեծ մասամբ, Տաճկահայաստանի խնդիրը լուծւած էր դիւանադատական ճանապարհով եւ ապագա գործնական իրացումը կը սպասէր օրէ օր: Պալիս, Կիրիլեան,

իզմիր և Թիւրքիոյ արևմտեան շարք մը գաւառները գրաւման տակ կը գտնուէին: Հայաստանը իր սահմաններն ընդարձակած՝ հասած էր 1914-ի ոռոսական սահմանադիւր: Ղարաբաղը պատմական ցնցումներ կապրէր՝ Հայաստանի Հանրապետութեան միանալու համար:

Հայաստանի Հանրապետական կառավարութեան և քաղաքական ու կուսակցական ղեկավար տարբերու համար մէկ գերագոյն նպատակ գոյութիւն ունէր, — Տաճկահայաստանի ապստումը և Միացեալ Հայաստանի մարտընցումը: Այդ նպատակին հասնող ճանապարհները երկուք էին. — 1) դիւսակալտական աշխատանքը, որ մեծ մասով արտասահմանի մարմիններուն թորուած էր: 2) ներքին կազմակերպութիւնը և զինուորական պարտասութիւնները, որոնք ընած էր Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութիւնը: Տարբեր լուրջ մտահոգութիւններ, մասնաւոր Հայաստանի ժողովուրդի քաղաքական և տնտեսական ապրումներէն դատելով, գոյութիւն չունէին:

Հայ բոլշեփիները շատ չնչին ոյժ մը կը ներկայացնէին. կարելի է ըսել, ցիր ու ցան քանի մը անհատներ էին, որ այդ անուսով կը ճանչցէին: Այն աստիճան անոնք թոյլ էին հայկական ներքին կանաչի մէջ, որ Հայաստանի կառավարութիւնը դիտարանէ և Ազրբէյջանէն հաւածւած Հայ բոլշեփիները ներս ընդունելու չէր վարաներ: Անոնք, որեմն, կը վայելէին կատարեալ ապստութիւն մը և պաշտօններ ունէին պետական հիմնարկութիւններու մէջ:

Հայաստանի կառավարութիւնը, անձնալստահ իր ուժին և ժողովուրդի առողջ դատողութեան, իր ուշադրութիւնը չկեդրոնացուց բոլշեփիկան հաւանական վտանգին վրա: Բոլշեփիքն այնքան վտանգաւոր էր, որքան վտանգ կրնար սպառնալ Ռուսաստանէն: Իսկ Ռուսաստանին (եթէ այդ ոյժը ներկայանար և ուզէր ինքը լուծել հայկական հարցը) ընդառաջելու բարեացակամութիւնը չէր պակսեր:

Արդ, հարց կը ծագի, թէ Ինչպէս այսպիսի չնչին ոյժ մը կրցաւ մեծ խառնակութիւն առաջացնել և հետագային սարսել Հայաստանի պետական շէնքը:

Հայ բոլշեփիներու մայրենեան ապստամբութիւնը վատագոյն դաւադրութիւն մըն էր, կատարեալ լարկածախնդրութիւն մը, որ կրնար քայքայել, աւերածութիւն առաջացնել, պետութիւնը խորտակել, բայց կը բերէ չէր կրնար ինչպէս քաղաքական, տնտեսական կամ յեղափոխական որևէ հաշի տակ: Անխիտանական քայլ մը, որու ամենէն անտրամաբանական արտայայտութիւնը մէկ նպատակ ունի. — իշխանութեան բնաջնդու մը: Եւ, իրօք, երբ մայրենեան ապստամբութեան ղեպքերն ու զերակատարները նկատի կառնենք (չարժման պատմութիւնը մեր ներկայ յօդաւորի սահմաններէն դուրս է), կը տեսնենք որ հիւանդութիւնը հայ ժողովուրդի մարմնէն չէր բխէր, և իր այդ հանգամանքով կը դառնար ուշադրութեան վրիպող և խիստ վրտանգաւոր, որպէս կրնակէն զարեւած հարմած մը:

Դաշնակցութեան հարատւակութիւնները մէկ կողմ թաքնենք: Եթէ նկատի առնենք բոլշեփիկան թագմաթիւ երկերն ու յօդաւորները, որոնք ներսած են մայրենեան ապստամբութեան, անվիճելի իրողութիւն մը, ամենէն

տառաւ, ուշադրաւ կը դառնայ: Ո՞ր տարրերն իրենց վրա վերցուցին ապստամբութեան նախաձեռնութիւնը: Այս թուումը յստակորէն կը պարզէ ապստամբութեան ներքին բնոյթը:

Հայ բոլշեփիներն ընդամենն տասնեակ մը յայտնի անդամներով և երկու տասնեակ ալ անյայտ և կասկածելի գործակալներով աշխատանքի ձեռնարկած անոնց Հայաստանի մէջ: Հայ մտաւորակութիւնն անոնց հետ չէր հայ իրողացիութիւնն ու բանուորութիւնը անսոց հետ չէին. մնացած հայ զանգաւածն անոնց մասին չէր մտածեր: Ու հայ բոլշեփիները չկրնայով արժատ ընելի հայ ժողովուրդի մարմնին վրա, ձեռնարկեցին վարակել այնպիսի օրգաններ, որոնք թէև դուրս էին ժողովուրդի կազմէն, բայց կրնային հրդեհել ամբողջ մարմինը: Անոնք բլիշներ կազմած էին երկաթուղու արհեստանոցին մէջ, ուր մասնագէտ բանուորներու մեծամասնութիւնը ուսուերն էին. ինքնաշարժերու կարածին մէջ, ուր հաւաքւած էին մասնագէտները, հայ և օտար. գրահապատ դնացքին մէջ, ուր 30-40 մասնագէտ զինուորներ կային, հայկական բանակի թէքնիք մասերուն մէջ, որոնք ուշադրութենէ և ճշկողութենէ հեռու էին. և երկաթուղու մեքենավարներու, հեռագրիչներու և հեռախօսի ծառայողներու մէջ ունէին գործակալներ: Այս թւանքներու վրա պէտք է աւելցնել այն գործակալները, որոնք նպատաւոր միջավայր մը ստեղծած էին իրենց համար թաթարական և ուրու մայրականներու շրջանակին մէջ:

Ընթերցողը, ինչպէս կը տեսնէ, այս յիշած անկիւնները հանրային և պետական ուշադրութենէ հեռու կը մնային: Կառավարութիւնը ամէն դիրութիւն և ինքնավարութիւն կուտար այս մասնազիտական հաստատութիւններուն (գրեթէ ամէն տեղ այդ այդպէս է), որպէսզի լիովին կաբողաւային կիրարկել իրենց մասնագիտութիւնը: Իսկ բոլշեփիները կըցան այդ բըշիշներու միջոցաւ վարակել հայկական բանակի մէկ մասը, մասնաւոր Ալեքսանդրապոլի: Կարսի և Սարըզամիշի շրջաններու մէջ:

1920 ին Մայիս 1ի տնակածտարութիւնները կատարեցան հանրային և պետական ուշադրութեամբ, աշխատաւորական կառավարութեան մը վայել կարգապահութեամբ: Խաղաղութիւնը պահպանեցաւ և տեղի չտրեցաւ քր և է միջպակի, որ արատ բերէր աշխատանքի տօնին: Այդ ցոյցերու ընթացքին, տնվածաւալ բազմութիւնն անտարբեր էր քանի մը տասնեակ, երբեմն ալ հարիւրակի մը հասնող բոլշեփիկան պուշտուցներուն: Ուժեղը միշտ վեհանձն է՝ ու միամիտ: Սակայն, բուշեփիկան դաւադրութիւնը բնաւ նկատի չառաւ ժողովրդապէս ուժերու այս փոխարարներութիւնները: Երբ հայ աշխատաւորութիւնը երեկոյան իր տունը քաշեցաւ, դաւադիրներու խմբակը տեղադրեցաւ Մուսայէլեանի գրահապատ դնացքը, տէր դարձաւ Ալեքսանդրապոլի երկաթուղու կայարանին և գրահապատի թնդանօթներն ու զնդացքներն ուղղեց ժողովուրդի կուրճքին: Մեր յիշած մասնագիտական բլիշները, իրօք քանի մը տասնեակներով, ամպստամբութեան դրօշը պարզեցին մէկ միլիոն հայ ժողովուրդի դէմ: Օգտուեցան երկաթուղու, հեռագրական և հեռախօսային ցանցէն, իրենք զիրենք յայտարարեցին Հայաստա-

նի «յեղափոխական կառավարութիւն»։ Ղլատեցին հարողակցութեան մեքեան, գլխաւորաբար դահասպատի սպառնալիքի տակ։ Քաղաքացիական կռիւ մարտահրաւեր կը կարդային բոլշեկի դաւազիրները, և աւելի համարձակօրէն՝ զօրքը կը քայքայէին, խոստանալով «տուն» զրկել զանոնք։ Հայ ժողովուրդն ու կառավարութիւնն անպատրաստ էին քաղաքացիական կռիւի, անպատրաստ էին զերազմացապէս հողերանութեամբ իսկ իշխանութեան դէմ սցւած ոյժը դասի և դասակարգի խնդիրներ չէր, որ հրապարակ կը դնէր, այլ պարզ դաւադրութիւն մը, որ ուժեղ էր իր կազմալուծող բնոյթով և ձեռք ձգած դէնքերով։

Հայաստանի կառավարութիւնը և Հ. Յ. Դաշնակցութիւնը առաջին օրերուն տատանեցան արեւմտոկուրի մէջ մտնելու։ Խոհանութեան յորդորներն ու բանակցութիւններն անլաւի մնացին դաւադիրներէն։ Ընդհանրապէս, անոնք օգուտեցան այդ տատանմաններէն և աւելի քայքայեցին զօրքը, բաժնելով զայն այն սպաններէն, որոնք պետութեան պաշտպան կուզէին հանդիսանալ։ Թրքական վտանդի դէմ, անոնք զօրքին համոզած էին թէ թիւք-բոլշեկիկան երբայրութիւն մը գոյութիւն ունի, և թէ՛ իրենք կարող են իրենց տուններն երթալ, առանց վայրկեան միակ մասհոգեւորու այդ մասին։ Այսպիսով, զօրքի մէկ մասն անոնց կողմն անցաւ, իսկ մեծ մասը տուն վերադառնալու պատրաստեցաւ։ Որով, Հայաստանի Հանրապետութիւնը կը զրկէր Անգլանդի արտաքին և կարող նահանգներուն մէջ տեղաւորուած զօրքերու օտարակութենէն։ Բացի Երեւանէն և Երեւանեան ճակատներէն, ի՞նչ քաւառներու զօրամասներն ալ կը քայքայէին և բոլշեկիկան ղրկիչները զրութեան տէր կը դառնային մէկ քանի օրով։

Դաշնակցութիւնը Հայաստանի բանակի վրա կը նայէր որպէս համազգային և համապետական չեղօք հաստատութեան մը, որու զերազմը նպատակը պիտի ըլլար հայրենիքի պաշտպանութիւնը։ Դաշնակցութիւնը խստօրէն հեռու էր մնար միջամտել բանակի ներքին զործերուն, պարզօք մը, որ ազատ ասպարէզ բացաւ հայ բոլշեկիկներու դաւադրութեան։

Այս մահացու դաւադրութեան դէմ ժողովուրդը ծառայաւ։ Հ. Յ. Դաշնակցութիւնը կուսակցականորէն հրապարակ իլաւ։ Կառավարութիւնը, Դաշնակցութիւնը և ժողովուրդը անբաժան ամբողջութեան մը կազմեցին։ Մայիսի 5էն մինչև 10ը, հինգ օրուայ ընթացքին, երկիրը կազմակերպուած բանակի մը պէս ոտքի կանգնեցաւ։ Չվարակուած զօրամասերը, ժողովուրդական հոծ բանակներուն հետ միասին կու՞ր դաշտ իկան։ Ժողովուրդական այս անմահ օրհաներուն դէմ բոլշեկիկներն ամէն տեղ պարտեցան, որ միակ չկրնալով դիմանալ։ Վարակուած զօրքերն իսկ վճռական հարուածին տեղի տին առանց դիմադրութեան։ Դաւադիրները ճգմեցան։ Ոմանք բանտարկեցան, ոմանք ալ Վազգի շրջանն անցան, և իացան Յաջարներուն և բոլշեկիկան կարմիր բանակին ու Արբէշյանի ամբողջ սահմանին վրայ տեսական պատերազմական վիճակ մը ստեղծեցին Հ. Հանրապետութեան համար։

Այսքանը միայն մայիսեան ասպետամբութեան մասին, որպէս պատմական դրւագի։ Այս ամբողջ պատ-

մութիւնը որքան ողբերգական, նոյնքան կատակերգական է, տեսակ մը ծաղկաւրեան կառակերպութիւն։

Սակայն, այդ շարժման հետևանքներն աղիտարբեր կ'ան և անկողնի շարիք հասցուցին Հայաստանի Հանրապետութեան։

Հայկական պետութիւնը, թրքական դրոհէն առջև, հայ բոլշեկիկներու դաւադիր ակննովը պայթեցաւ, և հայկական բանակի Կարմիր տակ պարտելէն առաջ, բոլշեկիկներու մայրխեան խռովութիւններու ընթացքին պարտեցաւ։ Թիւրքերը 1920ի աշնան եկան ճեղքուած պետութիւն մը և պարտուած բանակ մը տրորելու։ Այլ լայնէ, թիւրքերը մեծ դժուարութիւններու պիտի բախտին, և թեև և թեև հայաստանը դժուարին փուլերն անցնէր և ամբանար։

Որպէսզի պարզ ըլլայ այն շարիքը, որ նիւթեցաւ Հայաստանի Հանրապետութեան և հայ ժողովուրդի դէմ, ես ընթերցողի ուշադրութիւնը կը հրաւիրեմ երկու կարևոր հանգամանքներու վրա, առանց յիշելու բազմաթիւ մանրամասնութիւններ, որոնք իրենց կարգին շարիքը մեծցուցին։

Առաջին, Հայաստանը մայիսի, յունիսի և յուլիսի ընթացքին գրկեցաւ Արարաբաղէն, Չանգեզգորէն, Դարբազեագիւն և Նախիջևանէն։ Հայ բոլշեկիկները Վրդ կարմիր բանակին հետ եկան և անդահատեցին Հայաստանի Հանրապետութիւնը, ճիշտ նոյնքան երկրամաս դրուելով, որքան թիւրքերը, հինգ ամիս յետոյ, յաջողեցան գրաւել Հայաստանէն, տիրելով Կարսին և Սուրմալուն։ Հայաստանը, ուրեմն, թիւրքերոյ դէմ պատերազմի ենդին հինգ ամիս առաջ՝ մահացու հարուած կը ստանար հայ և ռուս բոլշեկիկներէն։ Գրաւուած դաւառները ոչ միայն զօրք չէին տար, ոչ միայն ինչպիսիան ինքնապաշտպանութեան տեսակէտէն անպէտք կը դառնային, այլ պատերազմական երկար ճակատ մը կը ստեղծէին, հոն քաշելով մեր առողջ զօրամասերը և ժողովրդական վաշտերը։

Երկրորդ, ինչպէս տեսանք, բոլշեկիկան ասպետամբութիւնը՝ զերազմացապէս քայքայել հանդիսացաւ հայկական բանակի մեծ մասին, ղլխաւորաբար թրքական ճակատի վրա դասաւորուած զօրամասերուն համար։ Բոլշեկիկան խռովութիւնները ճպմելէն յետոյ, անշուշտ մեծ ուշադրութիւն դարձեցաւ բանակը վերակազմելու, վտանգալոր տարրերը հեռացնելու և ներարկելու զայն հայրենիքի պաշտպանութեան դադարաբով։ Բայց ամբողջ դարձած զօրամասերը, թէև զինուորական կարգապահութեան վերադարձան, սակայն, ամբողջային հողերանութիւնը մնաց։ Այլմասական բուժումը մտրող զօրաբանակի ցրումն էր, ինչ որ, այդ օրերուն, անկարելի էր. կը մնար աստիճանական բուժումը, որ երկար ժամանակի կը կարօտէր։

Թիւրքերը ժամանակ չտւին։ Մայիսեան խռովութիւններէն հինգ ամիս յետոյ, պարենաւորուած Խորհրդային Ռուսաստանի դրամով, պէնքով, և զօտեկրուած բոլշեկիկներու արտօնութեան և թէլադրանքով, թիւրքերը պատերազմի դուրս եկան Հայաստանի դէմ։ Հայաստանը, այդ հինգ ամսայ ընթացքին բաղձաթիւ ճակատներու վրա կը կուէր, իր դժուարութիւնը պահպանելու համար։ Թաթարական շրջանները, բոլշեկիկան զրդուժով զլուխ բարձրացուցած էին և օժան-

զակութիւն կը ստանային թիւրքերէն: Հայ բուլշեակները իրենց խռովութեամբ ներքին շարժք մը կը ստեղծէին, և կը ստիպէին կառավարութիւնը զգաղիլ այդ ներքեզի: Ղազարէն մինչև Նախիջևան երկարող ճակատը մեր յաւազոյն ուժերը կը սպառէին: Այս բոլորի հետ միասին, Հայաստանի կառավարութիւնը ամէն ջանք կը թափէր ամբոցնելու թրքական ճակատը, նախագգալով այն մեծ վտանգը, որ այդ կողմէն կը սպառնար Հայութեան:

Հայ-թրքական պատերազմը սլայթեցաւ: Հայ ժողովուրդը զինակոչին պատասխանեց պատրաստակամ և արագօրէն: Բայց զէնքի տակ կոչուող ժողովուրդը սխալ դատարարէր զինուորական պատրաստի և մարդած կորիզներուն մէջ: Իսկ այդ կորիզները հիւանդ էին: Մայիսեան պատմութեան ընթացքին զինուորական հոգեբանութեամբ պարուած կորիզներն էին, որոնք երկաթեայ բանակի մը խարխիւր չէին կրնար հանդիսանալ: Մանաւանդ, Լեֆէ նկատի առնենք այն արագ գործողութիւնները, որ պատերազմը կը հարկազրէր:

Հայկական բանակի մէկ մասը կուեցաւ Հերոսարար, և ինչ որ մնաց Հայաստանէն, մենք կը պարտինք այդ բանակին: Նոյնիսկ վարակած զորամասերէն ոմանք, պատերազմի առաջին շրջանին, կորովի զիմազորութիւններ ցոյց տւին: Բայց յաղթելու և մինչև վերջին չունջը զիմազորելու հոգեբանութիւնը պակասեցաւ անոնց: Թիւրքերուն հետ հաշտելու կամ «եղբայրանալու» զաղափարը ջլատող թոյնի մը պէս անոնց մտքին մէջ կը գործէր*):

Հայկական բանակը, ճակատազրկան այդ օրերուն, Լեֆէ կետովին պարտուեցաւ թրքական զերազանք ուժերուն տեղի տալով, պարտութեան մնացած կէսը կարող ենք վերագրել հոգեբանական այն բեկումին, որ

*) Բուլշեակները իրենց զեղբայրակամք երազը իրագործեցին: Թիւրքերը երբ Շիրակի շրջանը տեղաւորեցան, բուլշեակները ցոյցեցին անոնց միացում: Գիւղացիութիւնը գահ գնաց այդ անաշխի խանդավառութեան, հաստաց քիւրճիմ (հայ բուլշեակի քարոզով) և մօտ 8000 երիտասարդներ, երբ ամուսն ընթացքին լերգրոււի մանապարհներու վրա աշխատեցան և այլևս ետ չդարձան: Բուլշեակեան կոտորած:

հայ բուլշեակներէն ժառանգութիւն կը մնար բանակին: Հայաստանի Հասանապետութեան ամենէն յուսատու շրջանին բուլշեակեան մայիսեան արկածախնդրութիւնը Հայկական պետութիւնը զարթայելու բնոյթն ունէր: Հետևանքները, մէկը միւսէն աւելի ողորդական, իրարու յանդիմանեցին:

* * *

Հայ բուլշեակներու մեծ մասը մայիսեան պատմաբուրժուալները արկածախնդրութիւն մը նկատեց: Միւս մասը, որ արկածախնդրութեան հեղինակներէն կը բաղկանար, երբ առիթը ներկայացաւ, «չեղափոխական» ձեռնարկ մը նկատեց յիշեալ պատմութիւնը, որ նախապատրաստեց հայ բուլշեակներու Նոյեմբեր 29ը: Այսպէս, նայած թէ որ խմբակը իշխանութեան գլուխը կուզար, վերազնահատութիւնը ըստ այնմ կը փոխէր: Մինչև այսօր, այս դատարկարանութիւնները կը շարունակին: Հայ բուլշեակները Հայաստանի խորհրդայնացումը որպէս բարեք մը ներկայացուցին թէ երկրի և թէ արտասահմանի Հայութեան: Ամբոխավարական պատճառաբանութիւնը պատրաստ էր:— Հայաստանը տրորած էր. թիւրքերը կառավարեցին, զաշնակցական կառավարութիւնը ապիկար գտնեցաւ: Ու ահա հայ բուլշեակներն եկան և փրկեցին մնացորդ Հայութիւնը... Բայց այս պատճառաբանութեան կողքին կայ մայիսեան արկածախնդրութիւնը, Երկիսայրի սուր մը: Եթէ բուլշեակները պաշտպանեն մայիսեան արկածախնդրութիւնը և պարծենան թէ այդ քայլով խորտակեցին Հայաստանի նորահաստատ շէնքը (ինչ որ ճիշտ է և հետևողական), այդ պարագային՝ Հայաստանի խորհրդայնացման կեղծ ու պատիք բարբարութիւնը ծիծաղելի կը դառնայ: Իսկ թե՛ անպակոնին միայն Նոյեմբեր 29ին և հայկական պարտութեան պատմութիւնը ճերմակ վարագոյր մը դաշմեն իրենց, ստիպած են զէմ արտայայտել մայիսեան խռովութիւններուն, ինչ որ դարձեալ հայ բուլշեակներու վարկարկեման է:

Պատմութիւնը տարբեր վճիռ չի կրնար արձանագրել, բան այն որ այս երկու թւականները կապակցել և Հայութեան պարտութեան պատասխանատուութիւնը անցնել բուլշեակներու հաշին:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԳՊԱՆՈՅԻ ԶԱՌԱՆՑԱՆՔՆԵՐ

Բուլշեակները հերթական խուճապի մասնաւոր, խելագարութեան մի նոր նոպայ են սպրում: Հ.Յ.Պաշտպանութեան վախը հանգիստ չի տալիս Երևանի ու Թահրիսի կապիտէլ խնթիւրին, որոնք ուղղել խանդավառումն ու հոգեկան անհասարակաւորութիւնը անցել է այլևս արգասատելի ու ծիծաղելի բոլոր սահմանները: Զերթաւան գառանցանքը «Իշխանացութեան ինտելլեկտուալ» է. միացած անգլիացիները, Փրանսացի-

ների ու քերդերի հետ, զաւելտական թագաւոր Կիրիլի և ռուսիկավար ազատական Պոդոս փաշա Նուպարիէ հետ ձեռք-ձեռքի, իբրև մէկ օղակը հակախորհրդային շղթայի ձեռնարկային սկսած մինչև Պարսկաստան, Իսահակցութիւնը բանակներ է պատրաստում, որպէսզի յարձակի Պորհրդ. Միութեան վրա հարակից և Անգրիկովկասը ազատէ բուլշեակեան սիրապետութիւնից... Եւ ի՛նչ հեջաթներ են հնարուած հիմաւորելու համար այս ցնդարանութիւնները: Հան-

զիստ ան թողնում նոյնիսկ խեղճ Պօղոս Նուպարի դեպքը. դուրս են հանում զերեցմանից և զնում հակախորհրդային շարժման գլուխը՝ Կիրիլ թագաւորի և դաշնակցականների հետ միասին: Կապելիք գծեր չեն հապա Ինչ են այսպիսի արմարութիւնների հեղինակները...

Ահապազը Հնչեց Թիֆլիսից: Այլը. 29ին «Ջարևա Վաստիկա» պաշտօնաթերթը արտասուցեց Բէյբուսի «էլ Ահրամ» թերթի մտացածին մէկ յօդուածը, ուր, ի մէջ այլոց, հաղորդում էին այսպիսի զուհարները. «1920թ. սկզբներին հայերի ստալինոզները Բէյբուսիում տեսակցութիւն ունեցան Թիւրքիայի, Իրաքի և Պարսկաստանի զրդերի ստալինոզների հետ: Ընտրեց ընդհանուր գործադիր բիւրօ, որ պէտք է իրագործէր «Հայաստանի և Քրդաստանի անկախութեան» վերաբերեալ որոշումներն ու պահանջները: Աշխատանքը միաժամանակ տեղի էր ունենում անարգել, մինչև որ քրդերի մէջ պառակտում առաջացաւ և նրանց մի մասը հեռացաւ կազմակերպութիւնից: Մնաց միայն զրգական «Հոյրուն» կուսակցութիւնը, որն ապաստարութիւն կազմակերպեց իրիւրերի դէմ: Փարիզի հայկական գործադիր կոմիտէի, իրքական յետադիմական ստալինոզների և ոռուական սպիտակ բանակի միջեւ բանակցութիւնները շարունակուած էին: Միաժամանակ բանակցութիւններ էին վարուած հայերի և Ռումանիայի տարէկ կողմնակիցների մէջև Մերօպայում: Դեսպան գետական յետեղի էր ուշադրուած Նիցցա՝ մեծ իշխան Կիրիլի մօտ: Վերջապէս այնտեղ մի պայմանագիր ստորագրեց Կիրիլի և հայկական կուսակցութեան ստալինոզ Նուպար փայայի միջեւ: Եւ այլ այսպիսի անհնթեթութիւններ:

«էլ Ահրամ» այս գորութիւնը միայն ծծածը ստալինոզներէն արտասահմանեան ընթերցողների մէջ: «Ջարևա Վաստիկան», ընդհակառակը, արքա թերթի բոլոր սրտերը ընդունեց հալած իւրի տեղ և զից շնորհիւց մի առաջնորդը՝ «Վեղճամ յառաքալար», որի մէջ լայնօրով ու երկայնօրով Դաշնակցութիւնը հայտնիութիւն յետոյ՝ «ըյս սփռեց» նաև հակախորհրդական ուժերի բանակում՝ ոռուական մոլի սպիտակ դաւադրիականներ և «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» միջին (ինչպէս անանում են իրենց մտաւերիտաները) գոյութիւն ունեցող գործակցութեան աւելի ինտիմ կողմի վրա: Վերջապէս, գանձել է «հայկական թագաւոր» ունենալու բանալին, որը ըստ երևոյթի ուղտու և իննել նաև զրգական թագաւոր: Նիցցայով ստորագրուած «պայմանագիրը հետաքրքրական է և նրանով, որ նա հանդիսանում է հայկական յեղափոխութեան ուժերի որոշ միացում հակախորհրդային բազայի վրա: «Ռամակաւար» Պօղոս Նուպար փաշան Կիրիլի հետ պայմանագիր կնքելու գործում դաշնակցական լիազօրի դերում — դա այնպիսի մի ստալինի է, որ արժանի է ուշադրութեան, եթէ վերջինեւց այն գոտութիւնները, որոնք շարունակ բաժանել են այսպէս կոչուած «հայկական կազմատներին» (ռամակաւարներին) և դաշնակցներին:

«Այն փաստը, որ Կիրիլը հանդէս է գալիս, որպէս հայկական և զրգական «գահի» թեկնածու, բացի իր կամիական կողմից, ունի նաև մի այլ կողմ, որն արժանի է մեր աւելի մեծ ուշադրութեան: Կիրիլն ստա-

ւերպէս Փրանսիական իմպերիալիզմի թեկնածու է: Հանդէս գալով մեր հարաւային սահմաններում տեղի ունեցող իմպերիալիստական ինտրիգների բարդ կծիկում, որպէս ուրիշի ձեռքը խալալիք, Ռոմանովների այդ փյամ «տան» «ժառանգը» ցոյց է տալիս Փրանսիական իմպերիալիզմի հակախորհրդային գործունէութեան ակտիւացումը Արեւելքում: Զուր չէ, որ Կիրիլի Միւրիա և Իրաք ուղևորելուց առաջ այնտեղ են գնացել տիրահաշակ Ահարոն բէկը՝ Ահարոնեանն իր արքանականութիւնով և այնտեղի հայերի հետ բանակցութիւններ վարել: Նմանապէս գուր չէ, որ Փարիզում գումարել է «հայկական կոնգրես»՝ Փրանսիական գործակալ, Միւրիայի հայկական գործերի մասնազէտ Վասն Քապուչիանի մասնակցութեամբ: Այդ բոլորից յետոյ, ակախացել է Փրանսիայի հակախորհրդային գործունէութիւնը Արեւելքում:

«Վերլուծելով անխուսափելիորէն բխում է, որ... դաշնակցները՝ աւանտիւրիստական կուսակցութեան ջադաբական սերտ գործակցութեան կենսագործելիք Քրդաստանի անկախութեան գաղափարի հիմքն է կազմուած խորհրդային, թրքական կամ պարսկական ազդեցութիւնից անկախ մի պաշտպարմի տեղումը՝ վերոյիշեալ երեք պետութիւններին և առաջին հերթին ՌԱՄՄ-ի դէմ յարձակողական գործողութիւններ սկսելու համար:

Ուրեմն, վաղուց գերեզմանում ննջող «ռամակաւար» Պօղոս Նուպար փաշա, իր կեննքում երբեք Միւրիայի երես շտեամ Աւետիք Ահարոնեան, նոյնպէս ոչ մի անգամ Միւրիա ոտք չկիտած Կիրիլ, Վահան Փափագեան, Փրանսիական իմպերիալիստներ», զերդեր, թիւրք փաշաներ — սրանք բոլորը համերաշխել, սքրտաուող միութիւն են կազմել, որպէսզի արշաւեն խորհրդային իշխանութեան դէմ: Որ ասում ենք խելագարներ ու կապելիք գծեր են...

«էլ Ահրամ» ու «Ջարևա Վաստիկա»յի գառանցանքներից յետոյ ահապազը Հնչեցրեց, բնականաբար, «Պորհրդ. Հայաստան»ը: «Մեզ պերիալիստների թելադրանքով դաշնակցները սուս միապետականների և զիրու չէյների հետ ձեռք-ձեռքը սուած, հակախորհրդային ինտերվենցիայի դիրքեր են պատրաստում», արշինանոց տառերով յայտարարեց Հայկոմկուսի պաշտօնաթերթը: «Աւելի՛ զգաստ, աւելի՛ աշաւորջ», ազմուկ բարձրացրեց Ա. Ռանջեանը, որի ստալինոզող յօդուածը «Պորհրդ. Հայաստան»ի 4 մայիս համարում ոչնչու յետ չի մնում «Ջարևա Վաստիկա»յի խմբագրականից: Ընդհակառակը, Հայկոմկուսի քարտուղարը հոգեկան անհասարակչուութեան տեսակէտից մի քանի քալ էլ ստալին անցնում:

«Դաշնակցութեան ղեկավար «Բերթոն»՝ զբում է նա, ըստ էութեան անգլիական և Փրանսիական գլխաւոր շտաբների լրտեսական բաժինների մի մասնին է: Նրա ղեկավար «աղիքը» մի գալլի մասը Դորի գլխաւորութեամբ ի գուր չէ, որ տաք ճապատարան» ընտրեց Ռումինիան, հակախորհրդային պատրաստող ինտերվենցիայի այդ «մտաւորական պլանցարմներից մէկը: Նրա «ենդանի ուժերի» երկրորդ խմբակը, Փափագեանի, Շանթի ու Աղաբալեանի գլխաւորութեամբ, «ձալուկային» աշխատանքի համար չէ, որ շնչազուած են Միւրիայում, Իրաքում և Պարսկաստանում: Առանց դաշնակցական այս գործիչների անմիջական մասնակցութեան չէ. որ Միւրիայի և Իրաքի բանակներ են նետում ասանեակ ու հարիւրաւոր գիտակից հայ աշխատաւորներ, որովհետև նրանք խալալաբում են իմպերիալիստական վարձկաններին՝ հաջ դալթականներից թղանալի մի պատրաստել իմպերիալիստական

ինտերվենցիայի Մերձ-Արեւելեան ճակատի համար, կամ «Եւրոպական իմբր» կազմակերպել իմպերիալիզմի դէմ պայքարող տեղական ժողովուրդները դէմ»:

Ու ստեղծուց յետոյ, յոր իբր թէ ընկ Ա. Ջամալեանը Ինտերնասիոնական յայտարարել է, թէ՛ «բայժևեկները միայն բռնի ուժի ճնշման տակ կարող են վերահանալ», Խանջեանը շարունակում է գաւառնցիլ:

«Դաշնակցութեան խմբակներն անգործ չեն նըստած Խորհրդ. Հայաստանի սահմաններէ մօտ: Նրանց անմիջական զեկազարութեամբ էր, որ անցեալ տարի դուրս բարձրացրին կուլակային-բանդիտական առանձին խմբակներ մեր մի քանի շրջաններում, որոնց նպատակն էր խանգարել սոցիալիզմի յաղթարշաւը մեր երկրում... Կասկած չի կարող լինել այն մասին, որ Դաշնակցութեան աշխատանքները մեր երկրում և կարմիր գծից դուրս «նպատակ ունին» պայմաններ ստեղծել պատրաստող Ինտերվենցիայի համար՝ անկասկածաւոր Անդրիովկայը Խորհրդային Միութենից, ճանապարհ հարթելու Մանթաշեանների, Ղուկասովների և Նորէշեների համար դէպի Բագուի նաւթը:

«Դաշնակցութեան դերը Խորհրդ. Միութեան սահմաններից ոչ հեռու կազմակերպող ջրղական աղբստամբութեան մէջ միայն մի օղակն է նրա կողմից հակախորհրդային Ինտերվենցիային ամեն կերպ սպասաւորելու պատրաստակաւութեան ընդհանուր շղթայի: Քիւրք աշխատանքութեան դժգոհութիւնը տիրող սոցիալ-քաղաքական կարգերից իմպերիալիստական շուկայում գաղթելի սպեկուլացիայի ենթարկող, ջրիւր ամենառէկալիտն բէկերի և աշխրէթապետների հետ դաշնակցած դաշնակցական զեկազարները անմիջական նըպատակ են դնում՝ անգլո-ֆրանսական Ինտերվենցիոն ուժերի համար ամուր բազա ու ռազմական պլանցարմ ստեղծել մեր սահմանների մօտ՝ յանձինս... անկաս Բիւրջիտասնի: Քրդական սպառնալուծութեան շարժիչ գոպանակները գտնուում են անչլիական կղզիներ վայտնների, Վիլմանների, Մուղֆուռների և... Փափաղեանների ձեռքին: Նրանց հովանաւորն է ինքը՝ համառուսական ծաղրածուն՝ Կիրիլը: Կարելի է պատկերացնել աւելի զգելի ծաղր «առգային արատապական» շարժման համար, որպիսի ցուցանակ տալին են քրդական շարժումներին դաշնակցական փերթերը. շարժումներին, որոնց զեկազարութիւնը գտնուում է իմպերիալիստների վարձկան դաշնակցների ձեռքին, որոնց յուրըն քաղաքական կապիտալ են որոնում նաև Նուբար վաչանի»: Ը»:

Խանջեանին արձագանք է տալիս մի ուրիշ ջոզ րուշեիկ՝ Ակոպովը:
«Կասկածից վեր է, գրում է նա, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմը, դաշնակցներ և Երկրորդ Ինտերնացիոնալը համաձայնեցրել են ՌՍՀՄ-ի դէմ ջրղական սեպ ստեղծելու իրենց գործողութիւնները», նըպատակ ունենալով իրականացնել ճանդիական իմպերիալիզմի ինդիքը՝ քրդական սեպ ստեղծելով, պայքար մղել ՌՍՀՄ-ի դէմ, Խորհրդային Անդրիովկայը Խորհրդային Միութենից բաժանելու համար»: («Ռ. Հ.», 7 մայիս):

Իուլեիկ Ա. Բոնուենի եւս հրատարակում է, որ «Փաշտատական Դաշնակցութիւնը վերջին պատուակը չէ Ինտերվենցիայի բարձր միջանկիզմի մէջ: Նրան յանձնարարւած է ՌՍՀՄ-ի դէմ՝ փորձ ստեղծելու պլանցարմ կազմակերպելու պատասխանատու գործը: Մենչեիկեներ և մուսուաթականների «եղբայրական» կուսակցութիւնների հետ միասին, իմպերիալիստական իրաւիկայի Կիրիլի օգնութեամբ զեկազարութեամբ դաշնակցներ ուրուղծում են կոնկրետ պլաններ ձախողելու սոցիալիստական մեծ շինարարութիւնը»: («Ռ. Հ.», 23 մայիս):
Եւ այնչւ կը այլն: Եւ այլն:

Այս բոլոր հարցովի ստեղծ կարող էին մի խելաւս

գաւելոյի նիւթ կազմել որեւէ դուստական բնի վրա, էթէ միայն... երկրի Իշխանութեան զուլուր կանգնած մարդկանց յուրը համոզուուել արդիւնք շլինէին: Բայց Խանջեանները պնդում են, որ իրենց խելապատակից դուրս եկած այս բոլոր ցնդարանութիւնները «միանգամայն ոչալ վտանգ» են հանդիսանում, իսկ Խանջեաններն այսօր Իշխանութիւնն են, որոնք «համոզունըն» կախած է երկրի ու Բողովրդի ճակատադիրը: Խանջեանները ո՛չ միայն ստեր են յօրինում, այլև այդ ստերի վրա գործնական քաղաքականութիւն վարում: «Դաշնակցների Ինտերվենցիոնիստական մեքենայութիւնները թեւարկող այդպիսի մտայնութեան ամէն մի արտայայտութիւն պէտք է անդրոջ պայքարով մերկացնել և տեղն ու տեղը շախմատել»:

Եւ ջախջախում են:
Նրանց օգնութեան են դալիս անջիլ ու դիւրահաւատ մտաւորականները, որոնք իրենց սոփիստ ու երկշուտ դիրքով բարոյական վաւերացում են տալիս կատարւած վարադուութիւններին: Նրանց ձեռքին գործիչ են դառնում բանւորական ու երիտասարդական գանդըւածները, որոնք հատուտաւ են յօրինած ստերին ու յարուցած ազմուկին: Անտեղեակ դրոի դէպքերին և երկրի իսկական կացութեան՝ «խորհրդային հասարակութիւնը», յաճախ հակառակ իր կամքի, դառնում է մասնակից բուլշեիկեան սաղաւնքներին:

Այս տեսակէտից, խիստ ընտրոչ է Յ. Քաջազնունու պարագան: «Ջաբեա Վաստուկա»ների ու Խանջեանների ստերը, ըստ երևոյթիւն, նրա վրա էլ ազդել են: Անցեալ հոկտեմբերին նա մի յօււած է գրել, որ «Խորհրդային Հայաստան»ը մերժել է հրատարակել, բայց պէտք եղած դէպքում օգտագործում է իր հեղինակի դէմ: Ա. Բոնուենու աւելով, Քաջազնունին, իբր թէ, այսպիսի տողեր է գրել այդ յօււածում: «Թո՛ղ ամբողջ աշխարհը դաւազատել, ըմբոստանայ ու զինւի խորհուրդները դէմ — դա աշխարհի դիտնալիքն է, բայց հայ հայրենասէրը գանդաւանու իրաւունք չունի»: Կամ թէ չէ՝ «Եւ կըր մտածում եմ, թէ Միութեան վրա գրոհ տուղ այլոյան ուժերի շարքերից մէկում կարող է գտնուել նաև մի այլ մարդ, որ իրեն հայրենասէր է անւանում, սիրոս լցում է անհուն ցաւով ու դայրոյթով»:

Իսկ Խանջեանը վկայում է հակառակը: «Քաղ. Քաջազնունին կառկածում է, որ Ինտերվենցիոնիստների շարքերում «կարող է գտնուել նաև մի հայ մարդ»: Ու սպառնական՝ ի կարգ է հրաւիրում Քաջազնունուն, որը «ցոյց է տալիս, որ ըստ էութեան զեո չի այրել իրեն Դաշնակցութեան հետ կապող կամուրջները»:

Երբ մի Քաջազնունի այսպիսի վարանումներին մէջ է ընկնում, ինչո՞ւ գարմանալ աշխարհի բաներից աւելի ջիշ տեղեակ բանւորները ու դիւրացիները վրա, ինչո՞ւ դատապարտել Հայաստանի մտաւորականութեան միւս խաւերը, որ հարկադրւած են հաւատում, թէ Դաշնակցութիւնը մինչև ատամները զինւած՝ պատրաստուում է յարձակելու «սօցիալիզմի կառուցման տենչուով բունւած» Անդրիովկայի վրա, որպէսզի Հայաստանը «պլանցարմ» դարձնի անդլիստական իմպերիալիզմի...
Կարելի է երևակայել, թէ ինչ հոգեպայան մթնո-

լրաք է տիրում խորհրդային իշխանութեան տակ, թէ անդիտութիւնը կամ կեղծեքը ի՞նչ զարհուրելի չափերի է հասել, որ Քաջազոնեու պէս մարդիկ, համալսարանի ուսուցիչներ, Գիտական Ինստիտուտի անդամներ, գրողներ, բարձրագի մտաւորականներ կարող են հասնուի, որ Դաշնակցութիւնը կամ մի այլ հայ կուսակցութիւն, այսօր, անզլիացու, զբոյր կամ մի ուրիշի հետ միացած՝ մտածէ յարձակել Խորհրդային Միութեան կամ Հայաստանի վրա: Բացարձակ տղէտ, աշխարհի գործերի մասին բոլորովին անտեղեակ կամ անչափ կեղծաւոր ու ստորաջարչ սէտք է լինել նման մտքեր ունենալու, ևս առաւել՝ հրապարակով յայտնելու համար: Իայդ տեսէք թէ ի՞նչ է կատարուում Հայաստանում. զիւղացի, բանւոր, մտաւորական էլեւալմուկ են հանուում, թէ՛ Դաշնակցութիւնը խորհրդային թշնամիների հետ միացած, չպատասխէն ու աճարկու», Հայաստանի դրանք է կանգնած: Ու Ջեկայից տրւած հրամանի վրա ժողովներ են գումարւում, բանաձեւեր հանւում, գուհարանական մաղթանքներ են կատարւում Կոմկուսի համար, սպառնական հայհոյանքներ ուղղուում Դաշնակցութեան հասցէին: Առաջ քերենք մի քանի նմոյշներ այդ յիմարտպատում պրոչուուից:

Երեւանի Հակադաշնակցական ցոյցերը «Ռորհրդ. Հայաստան»ը (8 և 9 մայիս) այս ձեւով է ներկայացնում

«Մայիս 6-7-ին տեղի ունեցան Երեւանի արտագրուական, հիմնադրային և ուսումնական կոմբլիցների դրւնքային մասնախմբի ժողովներ, որտեղ զեկուցումներ լրացնելի «Քնտրակենցիայի վտանգն ու Դաշնակցութիւնը» նիւթի մասին, կապակցւած կոնդրատուէչիչնայի տեղական արտայայտութիւնների հետ: Ընդունւած բանաձեւերում բլիչներն իրենց բուն գալլորին են յայտնում անգլո-Փրանսիական իմպերիալիստների լակէյ, աշխատանքութեան դահիճ զաշնակցների կտրի ոտնձգութիւնների դէմ, որոնք իշխան Կիրիլի զեկալարութեամբ քերէր ոչնչակցիտի տարրերի հետ բլոկ կազմած ջանկարի Հայաստան ու Քրդստան» ստեղծելու պարտակի տակ փորձում են անդլո-Փրանսիական իմպերիալիզմի համար յինակէտ ստեղծել՝ նպաստելու նրա արշաւին դէպի Անդրկովկաս, դէպի Իսպանիա և իտալիա, յենակէտ ինտերկենցիայի համար՝ Խորհրդային Միութեան դէմ:

«Պետհրատի կուսակցիլը ղեկարգ ժողովը իր բանաձեւում արեւով կուսակցական և բանտարան մասաների ուղարկութիւնը հակալեղափոխական կոնդրատուականութեան, նրա տեղական արտայայտութիւնների դէմ, ընդգծելով պայքարի անհրաժեշտութիւնը նրանց, ինչպէս և բոլոր տեսակի հակալեինեան թեւումների դէմ, որոնք իրականում միայն օգնում են հակապրոլետարական, հակախորհրդային տարրերին, դաշնակ աւանտիւրիստների նոր դաւերի մասին գրում է. «Քի պատասխան իմպերիալիզմի արեւում Դաշնակցութեան և բոլոր դոնի ինտերկենցիտնիստների հակալեղափոխական զաւերին, խօսք ենք տալիս կազմակերպել և գլլխաւորել բանտարանի մասին արտայայտական խանդավառութիւնը, սպազբական արդիւնաբերութեան հնգամեակի աւարտելու մինչև Հայաստանի խորհրդայնացման 11 ու տարեդարձը»:

«Ինչպէս միշտ, այսօր էլ «Հայ բուրժուազիայի այդ Փաշխապական կուսակցութիւնը, հակալեղափոխական Դաշնակցութիւնը, ըստ իր սովորութեան հանդէս էլ գալլիս անգլո-Փրանսիական իմպերիալիզմի ստոր վարձկանի և հետախուզի դրւում» (գրում են իրենք բանաձեւում ԲԺ. Ինստիտուտի կոմունիստ, կոմերիտական, անկուսակցական ուսանողներն ու պրոֆէսորները), «որպէսզի տապալեն խորհրդային իշխանութիւնը Հայաս-

տանում, բանտրների, զիւղացիների արեան մէջ խեղզեն նոյնմբերեան յեղափոխութեան նաճումները»:

«Քի պատասխան զաշնակ լակէյների, որոնք անգլիական և Փրանսիական իմպերիալիստների հետախուզիներն են Մերձարու Արեւելքում, խօսք ենք տալլիս էլ աւելի բարձր հիմքերի վրա դնել սոցիալում ու հարւածայնութիւնը, մորլիզացիայի ենթարկել բոլոր ուժերը, կատարել և գերակատարել արդիւնակցաները»— գրում են իրենք բանաձեւում Կարբիլի զուրարանի բանտրները:

«Ինստիտուտի ուսանողութիւնն ու պրոֆիսորները խոտանում են ամենայն լարւածութեամբ կատարել և զերակատարել ուսումնական պլանները, տալ որակեալ կարգեր, որոնք պէտք է դուրս վունդեն ճլեռաք» և մեղ թշնամի տարրերին»:

«Ժողովներն իրենց ընդունւած բանաձեւում շեշտում են ընդդէմ Դաշնակցութեան և հուլիւրը ջողարկող իրէջօլգիաների անողղ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտութիւնը: Միաժամանակ բանաձեւում նշում են, որ կոնդրատուականների գործունէութիւնն ամբողջովին ծառայում է կուսակութեան և հետևաբար նաև իմպերիալիզմի շահերին: Հայաստանի կոնդրատուականների ամբողջ իրքըհարուց սերտորէն զուղարկում է Հայ բուրժուազիայի մարտական կուսակցութեան՝ Դաշնակցութեան վարած ինտերկենցիտնիստական ջալաբանութեանը և այդ տեսակէտից մեր պայմաններում կոնդրատուականները միաժամանակ հանդիսանում են Դաշնակցութեան փաստական ագենտները, նրա հակալեղափոխական ծրագրի ջատագովներն ու կիրառողները»: Այդ պատճառով էլ յատկապէս այժմ անհրաժեշտ է Դաշնակցութեան զալաբարխօսութեան դէմ մղող պայքարը սերտորէն կապել կոնդրատուականութեան տեսութեան և պրակտիկայի դէմ մղող պայքարի հետ»:

«Երեւանի գործարաններից, հիմնարկ-ձեւարկիչներից և այլ ստառատարիչներից խմբագրութիւնս ստացել է բազմաթիւ բանաձեւեր, բողոք միտինգներում ընդունւած, որտեղ բանտրներն ու աշխատաւորներն իրենց բուն գալլորին են յայտնում անզլիական ագենտների, Մերձ. Արեւելքում աւանտիւրիստական նոր փորձերի առթիւ և ի պատասխան այդ ինտերկենցիտնի փորձերի, խոտանում են աւելի ուժեղացնել երկրի սոցիալիստական վերակառուցման սեմպլը, միաժամանակ անողղը և ջալիջարիչ հակահարւած տալով բոլոր նրանց, ովքեր կը հանդէսեն խանդարել այդ վերակառուցումը»:

30—31թ. թ. սկսւեց կայարանի նորակառոյց շէնքի աշխատանքը մի շարք փոփոխումներով: Նորակառոյց շէնքի պատերն աւարտելու, հիմա հարկաւոր է ծածկել, բայց այժմ ժողովուրդը պահանջում է, որ կայարանի շէնքը լինի երկու յարկանի, և այդ նպատակով բաց է թողնել յատուկ վարկ: Սակայն երկաթգծի վարչութիւնը չի համաձայնում, պիտում է, որ մի յարկանի լինի, իսկ այդ երկու տեսակ կարգադրութիւնը ազդում է շինարարական աշխատանքների վրա:

Մայիս 11-ին երկաթուղու վարչութիւնից կարգադրութիւն է դալիս, որ կայարանի նորակառոյց շէնքի պլանը սխալ է, պէտք է վեց քարի շինած սենն և մի պատի կէտը քանդել: Կարգադրութիւնը կատարում է, որ հսկայական վնաս է հասցնում երկաթուղուն:

Մայիս 19-ին վարչութիւնից դալիս է մի յանձնաժողով՝ ճարտարապետ Գարեգինյանի նախագահութեամբ՝ Երևանի կայարանի նորակառոյց շէնքն ստուգելու: Ստուգելուց յետոյ նորից մի շարք թերութիւններ են գտնում աշխատանքների մէջ:

Երևանի կայարանում շինուում է մի նաւթամուղի շէնք, որի ստանդը նոյնպէս շինուող յետոյ նորից քանդուեց: Երևան կայարանում փոխարող քանուորների համար պէտք է լինէր մի տուն ապրելու համար. այդ տան հիմքը շինուել, մեծ քանակութեամբ ծախս կատարուեց, բայց վարչութիւնը դարձեալ կարգադրեց քանդել այդ շէնքերը և ուրիշ տեղ շինել:

30 թիւ վերջերից մինչև 1931 թիւ մայիս ամիսը նախապատրաստական աշխատանք էր ստուում Նախիլեանից 5 կիլոմետր դէպի Ջուֆա-Նախիլեան Ջուջի մօտ ջրմուղ շինելու համար, վարչութիւնը հսկայական վարկ էր բաց թողնել այդ նպատակով: Աշխատանքի վայրն ուղարկուած էին 3 վագոն տուֆ քար, 17 վագոն փափուկ քար, մի վագոն դաճ և մի շարք այլ շինանիւթեր:

նիւթեր. սակայն բոլորից յետոյ վարչութիւնը կարգադրում է այդ ջրմուղը չկառուցել, շինանիւթերը պէտք է փոխադրել ուրիշ տեղ: Հիմա այդ շինանիւթերն այնպիսի տեղ են թափանց, որ հսկայական դժարութիւններով միայն հնարաւոր է տեղափոխել ուրիշ վայր: Երկաթգծի վարչութիւնը 1931 թ. կարգադրեց Արագածանի կայարանի քանուած երկու յարկանի շէնքը ներկել և ծածկել, դրա համար այդտեղ տեղափոխեցին մեծ քանակութեամբ շինանիւթեր, վարչութիւնը և պատրաստեցին դռներն ու պատուհանները, բայց յանկարծ վարչութիւնը նորից կարգադրեց այդ շէնքը շէնքել:

1931թ. մայիս ամսին վարչութեան կողմից վարկ էր բաց թողւում էլմիածին կայարանում բանուորական հանրակացարան կառուցելու համար: Ենթոյն տեղերի վ. Մարտիրոսեանի սխալ պլանի, դրա համար քար, հող ու աւազ է միւս շինանիւթերը կենտրոնացնելուց յետոյ, նորից ստիպւած եղան փորւած հիմքերը լցնել և շինանիւթերը փոխադրել ուրիշ տեղը: (ՁՆ. 2. > 23 մայիս):

Կամ թէ չէ —

«Ապրիլ 12-ին Երևան կայարանում մասնւոր շոգեմեքենան, քաղկայարանից վերադառնալիս, սլաքավար Տիգրան Կարապետեանին ուղարկելու կայարանի սլաքները փոխելու: Սակայն սլաքավարն ուշադրութիւն չէ դարձնում շինարարական գծի սլաքի վրա, որտեղ կանգնած է լինում պեմտա բարձած 21 վագոն: Այդ ժամանակ գնացքները դատարկելիս են լինում 40-50 կին: Եւ որովհետև մեքենավար Ե.Տ. Թադէոսեանն էլ անփոյթ է վարուում գնացքը գարկուում է լեքը վագոնների: Կանայք հարու են փախչում, իսկ 7 վագոնը շարքում և փշանոււմ են. վնասը հասնում է 8—10 հազար ռուբլու:

Ապրիլ 16-ին ապրանքատար № 870 շոգեմեքենան Ուլուխանլու կայարան իցնում Երևան ենվէ՛հիվկարն . Ուլուխանլու կայարանում ուղարկելուց դուրս է դալիս, որի պատճառով № 870 գնացքը 3 ժամ ուշ է մեկնում . խախտուում են գնացքների շփացուցակները, փշանում են մի շարք թանաքածէք գործիքներ և նիւթեղէն:

Ապրիլ 21-ին Երևանից Լենինական է մեկնում № 956 գնացքը: Մարդարապատ կայարանում այդ գնացքը խորտակուում է ու հսկայական վնասներ հասցնում երկաթուղուն: Ապրիլ 14-ին Արարատ կայարանում քատացում է Վեդիբասարի շրջանի համար 2 խոտ հնձող մեքենայ. այդ մեքենաները վազոնից իջեցնելու ժամանակ, թէ կայարանապետի և թէ կշռավար Ս. Բէխոյեանի անարարելից վերաբերմունքի պատճառով երկուսն էլ շարքում են ու անպէտքանում: Այսպիսով տրասպորտն իր ծայրահէլ անբարեխիղճ, փաստորէն վնասաբար աշխատակիցների պատճառով Վեդիբասարի արւած միակ դուր խոտար մեքենաները փշացնում է ու շրջանի առաջիկայ Խոտարքի գործը անյաջողութեան մատնում:

Տրանսպորտում մասնաւորապէս վերջերս ծայր առած այլպիսի երեւոյթները պատահականութեան հետեանց չեն: Համոզուած կերպով կարելի է ասել, որ դրանցից շատերը կատարուում են շարժառօրէն. այսպէս ինչով բացատրել այն հանդիսանքը, որ միասնամասն կանխել այդ վնասների բազմաթիւ կրկնութիւնները շարունակելու է:

Տրանսպորտի ղեկավար մարմիններին հարկաւոր է զգաստ ու աշխուրջ լինել նմանօրինակ երեւոյթները իսպառ վերացնելու համար: Իսկ երկաթուղային դատարանը պէտք է ամենախիստ պատմէ ենթարկի խոտարկումների և ընդհարումների պատճառ հանդիսացողներին:

Եւ այսպիսի «խայտառակութիւնների» ու «ճեղքեմքների» համարն ու հաշիւը շկայ «խորհրդային կոնտրոլայի» բոլոր «Ֆրոնտներում» ու բոլոր «սեկտորներում»:

ներում»: Ճեղքածը արդիւնաբերութեան մէջ, ճեղքածը դիրշտանտեսութեան մէջ, ճեղքածը արեւտի բնագաւառում: Ամէն կողմ՝ ճեղքածը:

Այսպէս, Հայկիմնյում էլ, խորհրդային բուրձին անինայ է ծախսում»: Հայկիմնոս պատրաստել է «Կիկոս», «Կինը Հերթապահ», «Միշտ պատրաստ» և մի շարք փոքրամոնտա նկարներ: Վերոյիշելու նկարների վրա Նարիբ Հարարներ են ծախսել և, ի վերջոյ, Սայիւզ-Կինոյի կողմից անպէտք է համարուել ու չԷրջանառութիւնից հանուել: Իսկ «Ուշադրութիւնը» 30 Հարար կանխուց յետոյ, հէնց էն գլխից մնաց Հայկիմնոյի դարակում, որպէս «ցուցահանդէսի» աւարկայ»: «1931 թ.ի նկարապատրաստման համար» Հայկիմնոս «բացարձակապէս ոչինչ» չի արել: «Անցել է արդէն առաջին կարողութիւնը և ոչ մի նկար չի հանւած: Որակեւլ սցենարիաներ չկան, իսկ չընդունւած սցենարիաների համար էլ աւագին գումարներ են վճարուած»: («Ո՞ւ. Հ.» 25 ապրիլ):

Ճեղքածը և «Կիկի բազայի» պատրաստութեան գործում.

«Առ 1 մայիսի կրտսնտեսութիւններում ցանւած է ընդամենը 216 հեկտար խոտաբոյս՝ նախատեսւած 3276 հեկտարի դիմաց. անհաստակ տնտեսութիւններում՝ 409 հեկտար, 3261ի դիմաց և խորհրտնտեսութիւններում՝ 76 հեկտար 3371ի դիմաց- իսկ սիլոսային բոյսերի ցանքը միանգամայն աշխարհով է արւած. կրտսնտեսութիւնները նախատեսւած 936 հեկտարից և խորհրտնտեսութիւնները՝ 590 հեկտարից ոչ մի հեկտար չեն ցանել մինչև մայիսի 1, իսկ անհաստակ տնտեսութիւնները նախատեսւած 361 հեկտարի դիմաց ցանել են միայն 3 հեկտար: Այս խալտատակ փաստերը գայիս են ապացուցանելու, որ սիլոսայման գործն այս տարի նոյնպէս պիտի ձախողման ենթարկուի»: («Ո՞ւ. Հ.» 8 մայիս):

Եւ կամ —

«Արաղեակի խորհրտնտեսութիւնը ոչխարաբուծական է և պահում է մօտ 15-000 դուռն ուղիս: 31 թ.ի կայմած պլանով նախատեսուած է ուղիսի քանակը հասցնել 40-000ի: Այդ քանակութեամբ ուղիսը կերով ապահովելու նպատակով, որչւած էր այս տարի ցանել 1-000 հեկտար Տողմա խոտաբոյսեր: Լենինականից ստանուած են 76 տոն գարու սերմ, սակայն, դրանից ցանելու համար պիտանի չէ ոչ մի ֆուտո: Բացի այդ, մնացած բոլոր տեսակի կուլտուրաների համար մինչև օրս չի ստացւած սերմացու և դրանով իսկ վրտանդի տակ է դրւում ողջ խորհրտնտեսութեան և անասնապահութեան կերի բազայի գործը:

1-000 հեկտար խոտաբոյս ցանելու համար պէտք է տային 200 եղ, մինչև օրս 30ն են տւել, պէտք է տային 6 տրակտոր, սակայն ստացւած տրակտորները 4 ր մարտուց յետոյ վերջին և ուղարկեցին ուրիշ տեղ: Բացի այդ մինչև այժմ չեն ստացւած հողամասեր, վերջ կունկրես պլան, թէ ո՞ր հողերում, ի՞նչ բոյսեր պէտք է ցանել:

Այսպիսով, ցանքի պլանը վերջերս իջեցրին 600 հեկտարի, յետոյ էլ հասցրել են 300ի, սակայն, այս էլ գուցէ չկատարուի, եթէ այսպէս շարունակի դրութիւնը»: (Նոյն տեղ):

Իսկ Աղբարայի շրջանում «Պրանով նախատեսւած է ցանել 400,5 հեկտար թեյատու կատար», 114 հեկտար ճակնդեղ, 306 հեկտար սիլոսային բոյսեր և 312,6 հեկտար կարտոֆիլ, սակայն, այդ ցանքերի համար մինչև օրս (8 մայիս) ո՞չ մի կիլո սերմացու չի տրւած ո՞չ կրտսնտեսութիւններին և ոչ էլ անհաստակ տնտեսութիւններին»:

Ճեղքածը պղնձի ճակատում. «մարտական դիրեկտիւները թերակատարւած են»: 1931թ. առաջին եռամսեակի ծրագիրը ճառանձնապէս անբաւարար է կա-

տարել Ջանդեղուրում՝ հանք 72 տոկոս, պղնձ՝ 50 տոկոս: Որակական ցուցանիչների առաջադրանքները չեն կատարուել, փերարարի քարքարեղ է պղնձի ինքնարժէքը համեմատած 1931թ. յունւարի հետ: Ծառայա են միտն երկաթբանական-հետախուզական աշխատանքները»: («Ո՞ւ. Հ.» 13 մայիս):

Ճեղքածը կրի գործարանում. «Այրիւլ ամիսին ըստ պլանի պէտք է տար 29,800 ր. արտադրանք. փաստորէն տւել է 10,000 ր., ծրագիրը կատարելով միայն 33,6 տոկոսով: Պրանի այս խալտատակ թերակատարման հետ միասին, խոշոր չափով իջել է նաև լանուերների արտադրողականութիւնը: Նախատեսւած էր մի բանուորի արտադրողականութիւնը 292 ր., փաստորէն արտադրւած է 111ր., կամ 38 տոկոս»: («Ո՞ւ. Հ.» 10 մայիս):

Ճեղքածը զինգործութեան մէջ. Այրիւլ ամսում «Արարատ» գործարանն ըստ արդժիկականի պէտք է տար 578,700ր. արտադրանք, բայց կատարելով տւել է 235,800ր., թերակատարելով պլանը 59,3 տոկոսով, մինչդեռ 138 բանուորի փոխարէն ապրիլ ամսում աշխատել է 162 բանուոր: Գինու մասն ապրիլ ամսւայ պլանը կատարել է 48 տոկոսով, կոնսակի ցեխը՝ 18,3 տոկ. և սպիրտինը՝ 39,6 տոկ: Իսկ եթէ պլանը համեմատենք բանուորների թւի հետ, կը տեսնենք, որ «Արարատը» ապրիլ ամսում կատարել է պլանի միայն 33 տոկոսը»: («Ո՞ւ. Հ.» 10 մայիս):

Ճեղքածը ընդհանուր ցանքի ապարհեղում. «Առ 20 մայիսի Հայաստանին տրւած 311,093 հեկտար գարնան ցանքից կատարւած է 206,248 հեկտար, որը կագում է պլանի 66,3 տոկոսը»: («Ո՞ւ. Հ.» 24 մայիս):

Մի խօսքով, դրութիւնը երթալով վատթարանում է. «խալտատակ ճեղքածները» խորանում ու լայնանում են: Հայկիմնոսի Կինոլոմն «արձանագրում է, որ չնայած արդիւնաբերութիւնն ապրիլին ապահովւած է եղել անհրաժեշտ հումքով և ներթերով, ապրիլի պլանը կատարւած է ընդամենը 65,4 տոկոսով: Ապրիլի պլանում նախատեսւած 4,700,000ր. արտադրանքի փոխարէն, արդիւնաբերութիւնը տւել է ընդամենը 3 միլիոն 78 հարար բուրգու արտադրանք»:

«Սոչոր չափով թերակատարւած է՝ պղնձի պլանը՝ կատարւած 68,7 տոկոս, տեկուտիլի պլանը կատարւած է 61,2 տոկոսով, պեթրայինը՝ 46,8 տոկ., «Արարատ»-ինը՝ 40,7 տոկ., Կարքիսինը՝ 65,2 տոկ. և համայնային շինանիքերի արտադրութեան պլանը՝ 63,4 տոկոսով»: («Ո՞ւ. Հ.» 24 մայիս):

Հայաստանի արդիւնաբերութեան 1931թ. ծրագիրը կատարման «այսբան խալտատակ կերպով յետ մնալը» ուղղելու համար Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը ուրիշ ճար չի գտել, բայց եթէ... «Մայիս 25-ից մինչև յունիս 25-ը Հայաստանում կիրառել արդիւնաբերութեան նեղեւածքների վերացման միամտնակ»: Մշակուել է «միամտնակի կայունութեան և կիրառման պլանը»: Նշանակւած են կենտրոնի և շրջանի համար յատուկ լիազորներ: Կուսակցութեան, Գէպէտին, մամուլին տրւած են համապատասխան հրահանգներ: Աղմուկը ու հարաւորոցը սկսւած է արդէն: Ճեղքածները պիտի փակեն, որպէսզի վաղը նոր ճեղքածներ բացւեն՝ աւելի լայն և աւելի «խալտատակ»:

Ո՞ր դրամատիրական երկրում կան այսպիսի խալտատակ, այսպիսի ընդգիցեցուցիչ երեւոյթներ: Ո՞ր քաղցրների կառավարութիւնը կը համարակուի նման վաճաղական ձևերով քաղցրի ու փշացնել ժողովրդական տնտեսութիւնը:

Յ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԷՆ

ՍԵՒ-ՔԱՐԵՑԻ ՍԱՔՕԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԱԳՐՈՒԹԻՒՆԸ*

VII

Վաղ առաւօտեան վեր կացանք և նայեցինք դէպի Յրոնք գիւղը: Մշոյ Դաշտը խաղաղ էր այժմ: Ձէր լըւում ո՛չ մի ձայն: Ձէր երևում երէկայ ծուխը: Յրոնքում տիրում էր մեռելութիւն. երդիքներէց ծուխ չէր բարձրանում: Մտածում էի՝ արդեօք ի՞նչ է պատահել:

Ինչպէս շուտով իմացեց, գիւղացիք տեսնելով Դաշտի բէթի՝ դիակը՝ սարսափահար փախել էին Հարեան գիւղերը. որդին՝ մի գիւղ, Հարսը՝ մի ուրիշ գիւղ, ով որ կարողացել էր: Շարաքներ իրար փնտրելով՝ հագիւ կարողացան դտնել: Կորել էին փոքրիկ երեխաներ: Ամբողջ գիւղը թալանի էր մատնել, հակառակ որ դէպքի ժամանակ պաշարւած էր զօրքով ու յայտնի ցեղապետներով, որպէսզի թալան չկատարւի: Տէր Մուշեղը բանտում պատմում էր, որ գիւղի ապահովութեան դրա հսկելու դրած պահապաններն իրենք էին կողպտուել և միմեանց ծախում էին կա՛հ կարասիները. ցեղապետներն իրենց բաժինը գէշերով տուն էին ուղարկում...

Խաղաղ էր Մշոյ քաղաքը: Երեկոյան պատմում էին Դաշտի բէթի՝ քաղաքործութիւնները և ասում էին, որ թեթև կերպով է վերաւորւած: Հետեւեալ առաւօտ ժամը 11-ին դիակները սայելով բերին քաղաք: Ամբողջ Մշոյ խուժանը հաւաքուած է նահատակներին տեսնելու:

Կէս ժամ շանցած եկաւ հայ կոմիսար Թուրքին էֆ֊ին մի քանի ոստիկաններով և ասաց, թէ փաշան ինձ կանչում է: Երբ դռնից դուրս ելայ, բազմութիւնը ինձ նայելով՝ ասում էր. «Ահա՛ սրանց փաշան դայիս է նայելու»: Երբ որ մտեցայ, ինձ ճանաչաբար տւին: Ես տեսնելով դիակները՝ ցանկանում էի վրաները ընկնել և լաց լինել և հագիւ գոպեցի ինձ ու սկսեցի սառնասրտութեամբ նայել, որպէսզի կասկածի աւիթ չտամ: Տարին փաշայի մօտ: Փաշան հարցրեց, թէ սրանց ճանաչում եմ: Պատասխանեցի, թէ նոյնիսկ եթէ եղբայրներս էլ լինէին, չէի կարող ճանաչել, որովհետև բոլորովին կորուած են:

Միւս օրը դիակները վերցնելով՝ Ս. Յակովբայ դաւթում թաղեցին:

Աղբիւր լսելով**՝ սիրելի ընկերով մահան լուրը՝ անմիջապէս պատրաստում է իր խումբը և շտապում Առաքելոց վանք, որպէսզի վրէժ լուծի Յրոնք գիւղի դաւաճաններէց:

Երկու օր յետոյ իմացանք, որ միութեամբի՛նք հեռագրով պաշտօնանկ է արւած և պահանջւած է Պոլիս:

Սոսկալի էր իմ դրութիւնը: Համարեա մի շաբաթ էր, որ անմահ հերոսների մերկ, սառած դիակները աչքիս առջևից չէին հեռանում: Երբ ինձ հրապարակ տարին, խուժանը կարծում էր, թէ Գուրգէնը իմ եղբայրն էր և եկել էր ինձ ազատելու: Բանտում ամենքը ասում էին. «Եթէ եղբայրը չէ, ինչո՞ւ է տխուր նըստած և ուրախութիւն չի անում»:

Մի օր տխուր-տրտում նստած պատուհանի առջև նայում էի դէպի Մշոյ Դաշտը, Յրոնք գիւղը: Մէկ էլ ինձ մօտեցաւ Ղըրը-Աղաջիի ոչոս ներսօն և բարեկրով նստաւ մօտս: Ես բարեկցի ու մտախոհ շարունակեցի նայել դէպի դաշտը: Ռէս ներսօն մի քանի րոպէ լուսմնալուց յետոյ, ասաց. «Յորի՞ կը մտածեա՞ս: Ես պատասխանեցի. «Քս էլ որ չմտածեմ, բառ էլ ո՞վ պիտի մտածէ»: Ասաց. «Քոս՝ վայլա՛ւ, ես էսա կը թռնիմ, էնքան ուրախ եմ»: Ես հարցրի. «Ինչո՞ւ»: Չորս կողմը նայելով ասաց. «Մինչև այսօր չէի տեսնւ ձեզ պէս մարդիկ և չէի հաւատար որ մեր երկիր յեղափոխականներ կան: Է՛մ տարի առաջ մեր երկիր կային Մուրատ, Տամատեան և մեր գեղացի Արմենակ (Դժոխք), իսա վայլա՛ւ, ես Արմենակէն դատ միւսներ չեմ տեսած: Մուրատ բաւական կտրիճ կերեար, բայց ստանց կուի բունեցաւ Անտոքայ լեռը և հրացանը ձեռքը անձնատուր եղաւ: Տամատեան ատկէ առաջ քլուեցաւ: Արմենակն ալ ինձի լաւ ծանօթ է: Այդ պատճառով չէի ճանչար ու կասէի, թէ՛ ինչքան Ընկերութեան մարդիկ կան, ամենքն ալ խաղերայ են: Բայց օրհնեա՛լ է Աստուած, այժմ կը տեսնեմ Դաշտի բէթի՝ դիակը և այն զօրքը, որ կը հանեն թաղելու. կը լսեմ Սերոբի անուշը, որ այնքան՝ կոխներ ունեցած է, կը տեսնեմ, որ քեզ չեն կրնար միւս բանտարկեալներու պէս նեղել և աշխատցնել. կրեսե՛մ բուն կոնտրի մարդն եմ»): Հապա իմա՛լ չուրախանամ»...

Այդ րոպէին ձեռքը կտրած մի քրդուհի, իր կաղ երեխայի հետ մօտեցաւ պատուհանին և սկսեց ողորմութիւն խնդրել. երեխան արագ-արագ, յանուն Աստծոյ, հայ էր մուրում: Ռէս ներսօն ինձ ուրախացնելու համար ասաց. «Բաւական ժամանակ է հոս ես, քերդերէն սորված կըլլաս, հապա նայից հարցուր»:

*՝ Տե՛ս «Դրօշակ», մայիս, № 5:
 **՝ Յրոմէի կուից ազատելի էր մի ֆիզայի, Բաղդասար անունով, որը գնացել եղիւր-Բիւնը պատմին էր Աղբիւրին:

*՝ Մի ամիս առաջ բանտի պաշտօնեաները ուզում էին ինձ աշխատեցնել, սրպէսզի կաշտո՛հ կարգեմ ինձանից, բայց ես մերժեցի և ասացի. «Ես ձեզ չեմ քանաչում, կը գրեմ կոնսուլին»: Կոնսուլի անունը լսելով՝ ամեմքն էլ վախեցան էին:

ո՛րտեղացի է»: Ես չուզեցի ունայ խաթրը կոտրել ու հարցրի. «Կո՛ս, տու շքախոս: Երեխան պատասխանեց. «Մայա Վաննէ» (Վանի կողմից): Ներսէս ծիծաղում էր իմ մատ խօսելու վրա: Երբ Վանի անունը լսեցի, հարցրի. «Կո՛ս, գունտէ վա նաւաւէջի?» (տղայ, գունտէ չի ունէր): Տղան պատասխանեց. «Գունտիսն Խանասոր է» (մեր գիւղի անունը Խանասոր է): Ես որ Խանասորի անունը լսեցի, շատ դարմացայ. մի-թէ՛ այդ մուրացկանները այդքան հետու սեղից են եկել: Նորից հարցրի. «Կո՛ս, դաստէ դաշիտա, չի բա՛ն, չը մա ժիւրննէ» (տղայ, մօրդ ձեռքը ինչո՞ւ է կտորած): Նա պատասխանեց. «Ջան Ֆէզայա տա լիխար» (Ջան Ֆէզայաները դարկին): Մեր խօսակցութեան ժամանակ ո՛չ Ներսէս հասկացաւ ամէն ինչ և զբոսանից հանկուտ ձկն փարա՛ն նեղեց մուրացկանների կողմը և տեղից վեր թռչելով՝ համբուրեց ճակատս և սասց. «Ես մինչեւ հիմա անհաւատ էի դէպի ձեզ, այժմ թողցած աչքովս տեսայ, որ հայի ձեռքով ջիւղը դարկել էր և տարը օրայ ճանապարհ գալով՝ ողորմութիւն կը ինչդրէ՛. իմ միւլըս նա, ջանս նա ձեզի դուրբան»...

Կուզէի աւելի խօսել, բայց այդ վարկիանին ներս մտաւ իմ պաշտպան աղան, և ունէ ներսօ՛ծ մնաս բարով աւելով դուրս գնաց: Այնուհետև նա շատ թունդ կլլաւ մեր սուր զործին: Նրա միջոցով նամակ, վառօղ, ցորեն, ալիւր և այլ հարկաւոր բաներ ուղարկում էինք Սասուն:

Իմ օրերը անցնում էին շատ դանդաղ: Այլևս դրօժ յայ բարեութիւններս կարւած էին. տեղեկութիւններ չսեւէի Տալարիկի մասին. միայն միխիթարում էի Ռուսաստանից եկող նամակներով:

Մայիս 25-ին ինձ տարին դատարան և պաշտօնապէս յայտնեցին Կարնի ուսու հիւպատոսի մահը. երբ նոր հիւպատոս դայ, այն ժամանակ կանները ճնու՛թիւն:

Ինձ համար ստեղծեց սպասու՛մ ու տառապանքի նոր շրջան: Տէ՛ր Աստուծ, ե՛րբ էր գալու այդ նոր հիւպատոսը. գուցէ հինգ տարի էլ չգայ, ես այստեղ պիտի տանջե՞մ: Առաջ լաւ էր. գոնէ ամէն կողմից յուսատու լուրեր էին հասնում: Իսկ ա՛յժմ. մեռաւ Գուրգէնը, մեռաւ հիւպատոսը: Ազդերը հետ այլևս յարաբերութիւն չունեն: Դժոխքը բանտից դնալուց յետոյ ինձ բուրդովին մոտացաւ: Այժմ բանտում ես ամենաողորմելի մարդն եմ: Ամենքը ասում են. «Ջանըմ, Սարգիւր անպէտքին մէկն է. եթէ լաւ մարդ լինէր, ուսուսաց կառավարութիւնը վաղո՞ւց ազատու՞մ կը լինէր»...

Մի օր էլ տիրւել ձատու՛մ էի պատուհանի առջև: Նամակաբերը ծիծաղելով ներս մտաւ և ինձ մօտենալով ասաց. «Սարգիս էֆէնդի, բաշխիչս սուր, թաւուղի շամակ է եկել»: Հինգ դրուշ տւի ու նամակի առի: Շտապով բացի ու ազահեծեամբ սկսեցի կարգալ: Գրում էին մայրս և Մարօն:

«Անմոռանալի Սարգիս ջան: Ստացանք թո վերջին նամակը: Չվախենաս, երկու խնդրազիր ենք գրած. մէկը Կարնի հիւպատոսին, միւրը՝ Կ. Պոլսի գեսպանին: Այսօր գնալու եմ Գանձակ նահանգապետին նորից խնդրելու և աղչելու, որ պէտքի իրենց կողմից ես արէ Կարնի հիւպատոսին: Ախ, ես թո չողուլ մասաղ, եարար ի՞նչ ես ուսում, եարար ի՞նչ ես հաղնում: Ես թեզ ասում էի՛՝ մի՛ գնա այդ կողմերը, իսկ դու

ասում էիր՛՝ գնամ Ս. Կարապետ, ուխտ անեմ և սուպ շուտով կը վերադառնամ, բա՛ծ ո՞ր է թո վերադառնալը: Մնամք թեզ համար աղօթաբար թո մայր և օր. Մարօ»:

Այս նամակը ստանալուց յետոյ, բաւական հանգրտացայ: Ազատելու յոյսս նորից կենդանացաւ: Սաղլս ձեռք առի ու սկսեցի երգել: Մի օր, պատուհանի առջև, ողևորւած ամուսն ու կրթում էի, երբ մի քանի սպանների տղայք մօտեցան ու սկսեցին լսել ու ծիծաղել: Ես նրանց մօտ կանչեցի: Սկզբում վարկեցան, բայց մօտս նստած օնրաչին սիրտ աւեց, ու նրանք մօտեցան ինձ: Ես ասացի Միխիթարին, որ ինքնաւոր դնէ, օնրաչուն էլ հրաւիրեցի միասին թէ՛լ խմել: Յետոյ սկսեցի սազ անել ու երգել: Երեխաները նայում էին զնուս և խօսում իրար վրաս: Մէկը ասում էր. «Վա՛ն, մի նայիր, սրա գլուխը ինչքա՛ն մեծ է»: Միւրը պատասխանում էր. «Միխիթարին գլուխը մեծ է լինում: Տեսես, ինչքա՛ն մարդ սպանած կը լինէր»: Օնրաչին հանգստացրեց, թէ՛ «Սարգիս էֆէնդի լաւ մարդ է, նա մարդ չի սպանել»:

Երեխաներին լաւ ուրախացնելուց ու հիւրասիրելուց յետոյ, ճանապարհ զրի և հրաւիրեցի, որ ուրիշ անգամ էլ գան: Այնուհետև նրանք ամէն օր գալիս էին մօտս, միւրգ էին բերում: Մայրերը նրանց շարունակուին պապաւելու համար գլխից հեռացնում և ուղարկում էին «ջանֆիդայու» մօտ: Ամէն օր համարեն ես ունենում էի խողող, կամ խնձոր, կամ տանձ: Իմ ժողովրդականութիւնը շատացաւ երեխաների մէջ: Նրանց հետ օրերով գրադրում էի, և ժամանակը աւելի արագ էր անցնում:

Յունիս 15-ին Մուրատի միջոցով նորից մի նամակ ստացայ: Գրում էր Մլոյ տեղական ընկերներից Ռուբէնը. «Միրելի Անմեղ: Վարդուց կուցի նամակ գրել, բայց սպասում էի յարմար առիթի: Գիտե՛մ՝ կը ցախի մեր անմահ Գուրգէնի և նրա ընկերների նահատակութեան վրա, բայց ի՞նչ արած: Նրանք դնացին բոլորի սրտից: Նրանց յիշատակը վառ պահելու համար պէտք է գրել Մեծ Քաղաք, որպէսզի նոր ուժեր գան, որ նորից ստալ տաննէք մեր սուրբ զործը, առանց յուսահատուելու: Ուղարկում եմ և Ազդերի նամակը. շուտով պատասխանիր: Դժոխքը ոչ մի բան չի անում. գրիր նրան, որ դայ մեզ հետ խորհրդակցելու մեր անելիքները վերաբերմամբ: Մինչև այժմ աւելորդ էի համարում թեզ հետ թղթակցել, որովհետև հանգուցեալ Գուրգէնը թղթակցում էր»:

Իսկ Ազդերը գրում էր. «Միրելի Անմեղ: Մնացել եմ վիզս ծռած, հաւի պէս, այս լիբան գլխին, անտէր, անօգնական: Մի ընկեր ունէի, Աստուծ այն էլ ձեռքիցս առաւ: Հասցեկները մնացել էին Գուրգէնի մօտ. նորից գրիր, որ ասցնե՛մ Մեծ-Քաղաք: Մօտ օրերս Անդրանիկին*) իր ընկերներից ուղարկեցի գրողներ, որպէսզի մի քանի մահաւան դատասպարուածներն տէնորի

*) Սերոբի և Անդրանիկի յարաբերութիւնները այդ ժամանակ լաւ չէին. Անդրանիկը ընդդիմադիր դիրք բռնել Սերոբ-Աղբիւրի հանդէպ: Գուրգէնը ընդհանուր միացնող ոյժն էր: Գուրգէնի մտինց յետոյ յարաբերութիւնները աւելի յարեցին: ԽՍԲ.

ենթարկէ: Նա էլ գնացել է Դժոխքի կողմերը և գրում է, թէ՛ ինձ թեզ ընկեր չհամարես, մինչև նոր ներկայացուցիչ դալը: Ես մնացել եմ շարած. սպասում եմ պատասխանի: Աղբիւր (Տաւրերիկցի):»

Ուրեմն, մի նոր գործ բացեց ինձ համար: Հէնց նոյն օրը Դժոխքին նամակ գրեցի. ինչը բացի, որ գնայ Ս. Յովհաննու վանքը, Անդրանիկի հետ տեսնել և իմանայ Աղբիւրից բաժանելու պատճառը: Մի քանի օրից յետոյ Անդրանիկից ստացայ մի նամակ, որով նա խնդրում էր, թէ՛ «Ռուսաստանից մեզ համար մի նոր խմբապետ բերել տաս, որովհետև մենք չենք կարող հնազանդուել մի բոնապետ մարդու»: Ես պատասխանեցի յորդորելով վերջ տալ անհամաձայնութեան և միանալ սուրբ գործի շուրջը. «Դեռ մեր ընկերների արեւը չի ցամաքել քարերի և խոտերի վրա, իսկ դուք փոխանակ իմանալու և վրէժ լուծելու, սկսել էք երարից բաժանել. եթէ մեր հեռուոր ընկերները լսեն՝ ի՞նչ պիտի ասեն»: Գրեցի և Աղբիւրին, որպէսզի աւելի մեղմ և գիշող վերաբերելի դէպի իր ընկերները:

Նոյն ժամանակ Ռուբէնից մի ուրիշ նամակ ստացայ, որով հարգուում էր, թէ թիւրքեր արդէն լսել են մեր խմբերի բաժանելը և, առիթից օգտուելով, ինչպի աղայի առաջնորդութեամբ քարոզիչներ են ուղարկեց, որպէսզի կարողանան Աղբիւրին ձեռք բերել: Վերջերս Պոլսից հրամայ է եկել, թէ՛ եթէ Սասունի ժողովուրդը պաշտպանում է Արարիկը, պէտք է շատալ ժողովուրդի սիրտը գրաւել և գործը մեզմ կերպով վերջացնել:

Դժոխքը շորս լիբա պահանջի ծախսի համար, որ գնայ Անդրանիկի մօտ: Գործերը վատ ընթացք կունենան, եթէ չմիանան: Սասունցի ինչպի աղան անսպասելի ընկալ՝ առնելով իր հետ մի քանի նշանաւոր պաշտօնեաներ, որպէսզի ժողովուրդի օգնութեամբ կարողանայ Սերորին սպանել: Ինչպի աղան թէ յաջողութիւն գտաւ: Նա սկսեց լուր տարածել, թէ սուլթանը շատ գիտն է դէպի տաւրերիկները, պէտք է նրանց համար շատ բարեքներ անի և շքանշաններ՝ տայ այն մարդկանց, որոնք հաւատարիմ կը լինեն կառավարութեան: Այսպիսի խոստումներով գրաւեց տէր Գարբէնէլին և ոչն Գասպարին, որոնք օգտուելով Սերորի և Անդրանիկի պատուութեանց՝ բարեկամացան վերջինիս: Անդրանիկը տէր Գարբէնէլի և ոչն Գասպարի գրգռումով արտում սպանեց տաւրերիկցի Մարտիրոսին, որից ժողովուրդը ճաշում էր և որը համարում էր Սերորի պաշտպան:

Սերորը տեսնելով այս իրադարձական դրութիւնը, որ լրտեսուում և հետապնդուում է երկու կողմից էլ, եղելութիւնը գրեց ինձ: Ես մնացի շարած. ի՞նչ անել, ի՞նչ ելք տալ գործին: Անդրանիկն արդէն չարին ու անհամար անցնում էր. Մարտիրոսի սպանութիւնից զատ յեղափոխականին չվախելու ուրիշ արարքներ էլ

թոյլ էր տւել: Սերորին գրեցի, որ անպատճառ գինաթափ անէ Անդրանիկին և ճանապարհ ձգէ: Մի քանի օր յետոյ Սերորը նրան շրջապատում է Կեմ գիւղում և նամակս ցոյց տալով՝ գնեքեր վրայից առնում է: Հոկտեմբեր ամիսն էր, երբ օրիորդ Եսթերը*) իրենց գիւղացիներէ համար հաց բերեց քանա և ինձ էլ յանձնեց մի նամակ, որը Անդրանիկի կողմից գրւած էր Դժոխքին: Անդրանիկը գրում էր. «Այս վեց-եօթը ամիս է, որ գործում եմ ձեր խորհրդով, բայց այս ինչ օրը հիւանդ էի Կեմ գիւղում. Սերորը եկաւ և գնեցերս տարաւ. այժմ ի՞նչ կասէք: Եթէ ցանկանաք, կարող եմ հասարակ հրացաններով գործել Սերորի դէմ»:

Այս նամակը ստանալուց յետոյ ինձ համար ամէն ինչ պարզեց. երեսաց թէ Դժոխքը մեծ դեր էր խաղում երկպառակութեան մէջ:

Ես անմիջապէս նամակի պատճէնը ուղարկեցի Ռուբէնին և յայտնեցի, որ իմ յարաբերութիւնները խզում եմ Դժոխքի հետ: Դժբախտաբար, նամակի բնագիրը, որ պահեցի սպահով տեղ իբրև փաստաթուղթ, շկարացայ հետո առնել բանտից հեռանալիս:

Ինչպի աղան համարեա թէ հասաւ իր նպատակին. Տաւրերիկի լեռները գրկեցին իրենց հերոսից: Սերորը տեսնելով Մարտիրոսի մահը և իր շուրջ նրկեղող գաւակները, համոզուած, որ իր անձն էլ վտանդի մէջ է, թողեց ու հեռացաւ Գէլիէ-Գուգան տէր Գալի տունը: Ինչպի աղան իր յաղթութեան լուրը իմացեց Մշոյ կառավարութեան:

Ռէս Աւօս հետը առնում է եկած ոչխար, սէր. կարգաւ ուրիշ ուտելիքներ, ամենն էլ թունաւորած, և տանում է իր մտերիմ բարեկամ տէր Գալի մօտ: Այստեղ յայտնում է, որ Բաղէշից գործ է դալիս Սերորին բռնելու համար և Սերորին խորհուրդ է տալիս հեռանալ Խալաթի կողմերը, մինչև որ վտանդը անցնի: Ապա հերասիրում է իր բերած կերակուրներով: Ռէս Աւօս ինքը չի ուտում, պատճառ բերելով, թէ երեք օր է հիւանդ է, և քիչ յետոյ հեռանում է դէպի տուն՝ յաջողութեան լուրը տանելով Խալաթին:

Միւս առաւուս տէր Գալը գնում է եկեղեցի ժամերգութիւն անելու համար և տեսնում է, որ գիւղը շրջապատուած է զօրքերով: Շտապում է սուր և եղելութիւնը պատմում է Սերորին, բայց Սերորը բռնուած է լինում սարսափելի փորձարկեցով: Նոյնը պատահում է և նրա մեծ որդի Յակոբին և երկու եղբայրներին: Իսկ Սեղաբը, Սօսին և միւս ընկերները, որ ոչն Աւօի բերած կերակուրներից չէին կերել, բոլորովին առողջ էին:

Սեղաբը տեսնելով Սերորի վիճակը՝ մտնում է թելը և սկսում է կամաք-կամաք լեռը բարձրացնել: Զօրքի հրամանատարը նկատում է այդ և հրամայում է զինուորներին կրակել: Սերորն ասում է Սեղաբին. «Վե՛մ բանս պի՛ծաւ. զրէք ինձ մի քարի յետևը, և դուք ձեր գլուխը սպանեցէք»: Եւ կարկոտի պէս տեղացող զնդակներից քարնւած՝ ընկնում է: Սօսին տեսնելով ամուսնու մահը՝ վերցնում է նրա հրացանը և սպանում է երկու զինուոր: Հրամանատարը կարգաւորում է ողջ-ողջ բռնել այդ քաջ հայ կնոջ: Սօսին վերադարձած՝ ընկնում է գերի: Իսկ Սեղաբը ընկերներով,

*) Որ. Եսթերի մասին տե՛ս «Իրօչակ» 1901 թ. № 6: Մոկուսի գիւղի Շարֆի աղայի սպանիչն էր:

Օր. Եսթերը ծանօթ էր երկարալուրեք-խամ, այդ պատճառով Անդրանիկի մտանկը փոխանակ Դժոխքին տանելու, ինձ բերաւ, որպէսզի առաջը առնելու մասին միջոցներ խորհնայ:

Հրացան արձակելով, հետանում է դէպի անտառ. ապառոււմ են երեք հոգի: Սերորբի հետ սպանուում են նրա մեծ որդին, երկու եղբայրները և երկու գինւոր, իսկ Սօսին վերաւոր՝ ընկնում է թշնամու ձեռքը: Ըստ պանոււմ է և տէր Գաջը, որը ուզում էր Հրացանով գնդակահարել ոչն Աօսին, որը Պալիլ աղայի հետ կորում էր Սերորբի գլուխը:

Միև օրը զօրքերը առնում են Սերորբի դուստր և Սօսին ու ճանապարհ ընկնում դէպի Մուշ: Սերորբի սպանութեան լուրը կայծակի արագութեամբ տարածւում էր ամէն կողմ: Թիւրք ժողովուրդը ցնծութեան մէջ էր և շտապում էր ընդ առաջ յայթական զօրքերին: Ես կանգնել էի բանտի արևմտեան պատուհանի առջև և հոգեկան յուզումով նայում դէպի Գեղի-Գուգանի ճանապարհը: Ահա սարի յետևից երկաց զօրքը: Զորս գինւորներ առջևից ասնում էին Սերորբի գլուխը, անցկացւած երկար փայտի ծայրը: Նրա յետևից, ձիու վրա, բերում էին Սօսին. երկու ոտիկաններ բռնել էին նրա թևերը, իսկ ձիու սանձը պահում էր ոչն Աօսի: Ապա աղայիս էր զօրքի հրամանատարը՝ Հրպարտ նստած ձիու վրա, Ֆիսը ճուռ: Նրա յետևից շարժուում էր զօրքը՝ յայթական դրօշակով:

Քաղաքին որ մօտեցան, ամբողջ ամէն մէկը մօտենում և թզում էր Սերորբի գլխին: Դատարանի առջև ձուղ ցից կանգնեցրին, որպէսզի ամբողջ լատուենէ գլուխը: Յաջորդ առաւօտ, նոյն հարկիստութեամբ տարին Բաղէշ:

Սերորբի մասին դեռ երկար խօսում էին բանտում: Ամենքը հիանում էին նրա հերոսութեամբ, մանաւանդ զովում էին նրա վերաբերումը դէպի կինը, որ մինչև վերջին շունչը պաշտպանեց նրան: Ջիրբանցի Մուշէյման աղան ասում էր, թէ՛ մենք ոչինչ չենք արել կառավարութեան դէմ, բայց զատապարտւած ենք 15 տարի տաժանակիր աշխատանքի, իսկ մեր կանայք մնացել են լիբր ոտիկանների ձեռքին, և մեր թշնամիները ծիծաղում են մեր վրա: Իսկ Սերորբ տղամարդու պէս կուեց Մուլթան Համիդի դէմ ամբողջ տասը տարի և իր կնոջ յետոց թշնամու ձեռքին: Այ՛ թէ ո՛վ է քաջ տղամարդը...

1900թ. յունւար 7-ին, Սասնոյ Սպաղանք գիւղացի ոչն Մակարը, Սերորբի վրէժը լուծելու նպատակով, յարձակում է Պալիլ աղայի ցեղի վրա և սպանում է աչքի ընկնող ութ ցեղապետներ: Լուրը հասնում է կառավարութեան ախանջը, որ համոզւած էր, թէ յեղափոխականները առանց վրէժի բարի թողնին Սերորբի մահը: Պալիլ աղան շտապում է հաղէջ կուսակալի տեղապահ Հրամանատար Ալի փաշայի մօտ: Այս վերջինս Պոլսից հրահանգ է խնդրում և ստանում է կարգադրութիւն Սպաղանք գիւղը պատժելու: Պալիլի խորհրդով կանչում է մօտը աւուրներից ոչն Գասպարին և նրան գործիք է դարձնում Անդրանիկի և ոչն Մակարի դէմ:

Յուլիս ամիսն էր, երբ Ալի փաշան զօրքով շարժում է Սպաղանք գիւղի վրա: Անդրանիկը, փաշայի

գալու լուրը առնելով, հետանում է Ս. Յովհաննու վանքը, իսկ Մակարը մնում է դիւղում: Երբ թշնամին մօտենում է, նա ծերերին և երեսմաներին ուղարկում է եկեղեցի, իսկ ինքը երիտասարդների հետ միասին կուով՝ քաշում է աւելի անտառի տեղեր: Զօրքը և շիւրքերը՝ համոզւած թէ եկեղեցին լիքն է ջան Ֆիլդայիներով, դիմում են փաշային, որը հրամայում է դնալ Համոզել, որ անձնատուր լինեն: Պալիլը երեսի շիւրքերի հետ մօտենում է եկեղեցուն և սկսում է յորդորել, որ անձնատուր լինեն: Մերուսիները ասում են, թէ մինչև որ Պալիլը եկեղեցու դուռը չգայ, իրենք անձնատուր չեն լինի: Պալիլը վախենալով՝ ուղարկում է իր եղբայրներին: Հէջը որ սրանք մօտենում են, եկեղեցու դռները բացում են, որոտում են Հրացանները, և Պալիլի եղբայրները գլորում են դետին: Պալիլը խելագարի պէս վազում է փաշայի մօտ. սա հրամայում է արել եկեղեցին: Կրակ են ձղում: Քաշէն եկեղեցին չի այրւում, բայց ծխից մեռնում են 24 հոգի — երեսներ, կանայք և երկու ծերունիներ: Փաշան վրդովւած՝ սպանել է աղայիս ոչն Գասպարին և ինքը վերադառնում է Մուշ, կանչում է հայոց առաջնորդին և հրամայում է հեռագրել Պատրիարքարան, թէ՛ փաշան լսելով, որ Սպաղանք գիւղում ջան Ֆիլդայիներ կան, զօրք է ուղարկում և համոզում է, որ անձնատուր լինեն, բայց նրանք չեն համաձայնում. այդ պատճառով եկեղեցիի կրակի է տրուում:

Երեկոյեան ստացանք Մակարի նամակը, որը անմիջապէս ուղարկեցինք առաջնորդին:

Մակարն ու Անդրանիկը միացած՝ հետամուտ են լինում Պալիլին: Վերջինս, իր ծառաներով Մշից վերադառնալիս, զորախօս Մառնին հայ գիւղի մօտ, կիրճում, յարձակում է ենթարկում հայերի կողմից և սպանում: Նրա գլուխը կտրում են Սերորբ գլխի փոխարէն, վերցնում են վրայից նոր ստացած շահնշանը: Ապա գալիս են ոչն Աօսի տունը և նրան ամբողջ ընտանիքով կոտորում են:

Այս լուրը սարսափ ազդեց կառավարութեան վրա: Կուսակալը գալիս է Մուշ և հրամանատարին ուղարկում է Սասուն: Հրամանատարը գնում է դէպի Շէնիկ-Սէմալ, իսկ մի քանի քաջ գինւորներ մտնում են գիւղերը և թալաններ կատարում: Գիւղացիք հաւաքելով ունեցած-չունեցածը՝ քաշում են սարերը: Իսկ Որնաձորի գիւղում մտնում են երկու երիտասարդներ գիւղը պահպանելու համար: Երբ թիւրք «քաջ» գինւորները մտնում են այդ գիւղը, հայ երիտասարդները իրենց հասարակ Հրացաններով սպանում են մէկին և միւրին վերաւորելով՝ առնում են նրանց Հրացանները և փախչում: Հրամանատարը, հրացանների ճախը լսելով, կարծում է, թէ ջան Ֆիլդայիները շարժապատում են իրեն. թողնում է երկու դիակները և փախչում է քաղաք: Այսպէս խայտառակ վերջ է ունենում Սասունի խաղաղացման ծրագիրը:

(Վեյցր յայտոյ ակցում)

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն ՈՒ Մ

ՀԱԼՍԾԱՆԷՔ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Հալածանքը մտադրականութեան դէմ Հայաստանում երբեք էլ չի դադարել, բայց ամէն անգամ, երբ բռնակիները ներքին գործերը վատանում են, հակամտադրական շարժումը ակտի սուր ու դժգոհ ձևեր է ստանում: Վերջերս հայ մտադրականութիւնը նոր հալածանքներ առարկայ է դարձել: Եւ այս անգամ բարձրորակ մտադրականութեան ամբաստան, որ հողով-սրտով խորհրդային իշխանութեան հետ է եղել և խորհրդային տնտեսութեան ու մշակութի գարգացման ջերմ պաշտպանը հանդիսացել միշտ:

Հալածանքի արտաքին առիթներ չեն երևում, բայց յարձակման այն թափը, այն անձարձակ ոճը, որ բռնակիները գործ են ածում հայ գիտնականների ու մասնագէտների դէմ, հաստատում է ներքին լուրջ պատճառների գոյութիւնը: Ըստ երևոյթի, իրօք որ, բռնակիները խիստ նեղ դրութեան մէջ են, որ նոյն իսկ մինչև այժմ իրենց արպէս հաւատարմորէն ծառայող մարդկանց խրքերում էլ դաւեր ու թշնամիներ են որոնում:

Այս նոր յարձակման առաջին զոհերից մէկը եղաւ Յ: Քաջազնունին: «Բռնակիները մեր ժառանգներն են», «Հ. Յ. Դաշակցութիւնը անկեղ լուին այլևս» — այս նշանաբաններով գնաց նա Հայաստան և տարիներ անընդհատ լուիկ-մնջիկ ծառայեց կոմունիստ տէրերին: Հեռու չէ, անշուշտ, այդ ծառայութիւնը. պէտք էր հրատարակել զաղափարական ու բարոյական դէմքեր, ստորանկու, կեղծել ու սակարկութեան մէջ մտնել կեփական խղճի հետ: Քաջազնունին արդ՛ ամենը տարաւ անտրտուն: Հրամայեցին զրել Դաշակցութեան դէմ — գրեց: Նրա տղիք «Երոյթը» «Դրօշակ»-ի դէմ Հայաստանում կատարած քանտարկութիւնների առիթով դեռ մոռացած չէ: Բայց նոյն իսկ Գալպոլունու ամբերութիւնը, ինչպէս երևում է, հատել է. հոկտեմբեր ամսին նա ինչ որ յօդուած է գրել ձեռնորդը. Հայաստան — ում հրատարակելու համար: Բռնակիները յօդուած չեն տպել: Մայիս 11-ին Երևանի Ծիխաբարական Ինստիտուտի կոմբլիքի ղեկավար նիստում Քաջազնունին, որ դասատու է նոյն ինստիտուտում, երկու անգամ ճառ է խօսել, որ գլոբալ է բռնակիների գալութիւնը:

Թէ իսկպպէս ի՞նչ է գրել Քաջազնունին, կամ ի՞նչ է խօսել — յայտնի չէ. բռնակիները իրենց խօսքերով են հաղորդում նրա արտայայտած մտքերը, բայց, դրա փոխարէն՝ բառ չեն խնայում գատապարտելու համար նրան: «Նխտի ընթացքում, գրում է «Ձեռնգրք. Հայաստան»-ը (13 մայիս), երկու անգամ ելոյթ ունեցաւ Յ. Քաջազնունին, որը ճշմունք էր «հիմնադրել» իր անդրապ յօդուածի դրութիւնները, այս անգամ ևս, շարունակելով լուսութեան մատնել և անտեսել հակախորհրդային ինտելիգենցիայի պատրաստման ասպարիզում Դաշակցութեան, որպէս իմպերիալիզմի ա-

գնետի, դերը: Այդպիսով Յ. Քաջազնունին յամանց Դաշակցութեան վտանգը քողարկելու և, հետևաբար, նրա դէմ զգաստութիւնը և աշարժութիւնը թուլացնելու իր փորձերի մէջ: Այս տեսակէտից է, որ Քաջազնունու այն հաւատարմագրութիւնը, թէ ինքն ամբողջովին կտրել է իր կապերը Դաշակցութեան հետ, անհնայն իրաւամբ կարող են կասկածի տակ առնել ևս դիտել, որպէս երկերեսանի զեկլարացիաներ: Ընկերները Բզնունին, Արդեանը, Գիւլիքէլովեանը, Մաղմանեանը և ուրիշները բաժմաթիւ փաստերով և օրինակներով թէ՛ Յ. Քաջազնունու գրքից և թէ՛ անտիպ յօդուածից բերած ցիտատներով Կրակցի նրա անուովելովեան (ուղեփոխ) բացայայտ նացիոնալիստական դէմքը:

Ընդունած բանաձևում «ժողովը բուն գալութիւնով զատապարտեց Քաջազնունու բուն երկրի մի, փաստօրէն իմպերիալիստական ինտելիկենտների եւ նրանց ազնուն Դաշակցութեան ջրաղացին ջուր ակուլացնող դերքը և պահանջեց նրան ազատել մանկավարժական ասպարիզում աշխատելուց»:

Նոյն ժողովում հարաւածի տակ է առնում և պրոֆէսոր Թոտիկեանը, որ «իբ դասախօսութիւնների ընթացքում գարգացրել է այն միտքը, որ իբր թէ «Դաշակցութեան և Կոմունիստական Կրակցութեան միջև դրեթէ տարբերութիւն չկայ»: Նա փորձել է հաւատարացնել, թէ հայ բուրժուացիան տարբերում է եւրոպական բուրժուացիայից նրանով, որ «նա իբ գրքտիւնքով է բուրժուացիա դառնել»: Եւ առաջարկում է «ճճոական պայքար տանել նման հակադրութեան կոնցեպցիաների և գործունէութեան դէմ»:

Միտամանակ դրում է ԲՈՒՀ-երի մաքրագործման հարցը: ԲՈՒՀ-երը, այսինքն՝ Բարձրագոյն Ուսումնական Հիմնարկութիւնները թատարակում են դարձել «հակաիպոխիստական մտադրականութեան գործունէութեան. այդ մտադրականութիւնը «մինչև օրս քաղաքականապէս լիովին չի կողմնորոշւած. բաւական թուով մարդիկ դեռ տատանում են հին աշխարհի և սոցիալիստական յարթանկող երկրի ճամբարածակէտում»: «Ձեռնգրք. Հայաստան»-ը մի դատաւ ամբաստանապէր է ներկայացրել այդ մտադրականութեան ամենաբարձրորակ ներկայացուցիչներին՝ Հր. Աճառեանին, Յ. Մանանդեանին և այլն: Մայիս 21 համարում կարդում ենք.

«Մերիկ ներսում սրած զատապարտային պայքարի իր կոնկրետ արտայայտութիւնը դառնում է նաև ԲՈՒՀ-երի կատարելի ներսում: Այս բանն ասպարիզում է ընկալելուն պրոֆէսորների և մի շարք դասատուների ներկայ կուրսով: Հակաիւղեմտաբանական իդէալիստական աշխարհահայեցողութեան տէր մարդկանցից ու

մանք այնքան հետու են զնացել, որ բացարձակ կերպով դրսևորում են իրենց հակակրանքը Մարքս-լենինեան փիլիսոփայութեան զիայնակիական մատերիալիզմի և մեր կենդանու ձեռնարկունների հանդէպ:

«Իմենք փաստերին:

«Մարքսիզմ-լենինիզմի դէմ պայքարելու գործում առանձին տեղ է զբաւում պրոֆէսոր Հ. ԱճԱՌԵԱՆԸ: Ու այն մարդկացից է, որը հիտտերիկային հասնող հոգեկան յուզմունքի մէջ է ընկնում, երբ լսում է դիալեկտիկա բառը: Միջնադարեան սխոլաստիկայի և միտաֆիզիկ մտածողութեան այս հանրայայտի ներկայացուցիչը հրատարակ է դասաւանդել, երբ ուսանողները մէկն ու մէկը համարձակութեան է բնեւորում մեր պրոֆէսորին յիշեցնել իսկական գիտութեան, դիալեկտիկայի մասին: Եւ այս դէպքում պրոֆէսորը հոգեկան պասսիւ ապրումներից անցնում է «իրգայն» յարձակման դիալեկտիկական մտածողութեան դէմ: Դոնդիլոտեան տեմպերով «Չարդ ու փշուր անելով» ճիշտ մտածող ուսանողին, պրոֆէսոր Հ. ԱճԱՌԵԱՆԸ ազդարարում է. «ԻՄԱԼԵՆԿՏԻԿԱՆ ՈՐՏԵՂ ՈՒՉՈՒՄ ԵՄ ԽՈՒԹԻՐ, ԲԱՅՑ ԻՄ ԱՌԱՐԱՅՈՒՅԻ ՄԷՋ ՄԻ ԽՈՒԹԻՐ. լնդի դարգացում մէջ ԻՄԱԼԵՆԿՏԻԿԱ ՉԿԱՅ, իսկ եթէ դատար, գնա և ուրախացիր»:

Տարօրինակ է, սակայն, փաստ է, որ այս «անվախ» իդէալիստը տեղ է գտել Մանկավարժական Ինստիտուտում: Նմանապէս փաստ է, որ պրոֆ. ԱճԱՌԵԱՆԸ իրեն յանձնած ամբիոնն օգտադրծում է դիալեկտիկական մտաբերակիցով վարկաբեկելու և ժխտելու համար: Հետաքրքիրն այն է, որ այս նա կատարում է բացայայտ:

«Աճատեանից յետ չի մնում նաև ԱՇԽԱՐՀՆԻԿ ԲԱԼԿՆԹԱՐԸ: Աւանդելով Մերձուր Արեւելքի և նիթական կուլտուրայի պատմութիւն, վերջինս դրսևորել է պատմութեան բուրժուական նացիոնալիստական կոնցեպցիա: Աւանդող առարկայի ծրագրից իսպաւ դուրս է մղւած դասակարգային մոմենտը, էլ չենք խօսում դասակարգերի կուի մասին: Մերձուր Արեւելքի պատմութեան առանցքն է կազմել հին բրածոների, արիւիվային թղթերի, սեպագրերի, հիերոգլիֆների և ազգերի ջարդերը: Այս ամենը պարզ է և հասկանալի, եթէ մոռացութեան շտանք այն իրողութիւնը, որ Ա. Բալանթարը ժխտում է դիալեկտիկայի առկայութիւնը նիթական կուլտուրայի պատմութեան մէջ թրոհչնէր չկան» բացազանշում է Ա. Բալանթարեանը:

«Պատմութեան բուրժուա-նացիոնալիստական բնորոշութիւնը նուրբ կերպով երևան է դային նաև պրոֆէսոր ՄԱՆԱՆԻՅԵԱՆԻ մօտ: «Հին Հայաստանի պատմութեան» ծրագրին ու գասաւանդութիւնը վերոյիշեալ պրոֆէսորի մօտ կառուցւած է ազգային կոտորածների փաստերի նկարագրութեան վրա: Այստեղ նոյնպէս դասակարգերն ու նրանց պայքարը «անտեսւած» են:

«ԲՈՒՀերում մարքսիզմ-լենինիզմի դէմ պայքարելու գործում յատուկ տեղ է զբաւում պրոֆէսոր ԲՈՂԱՐԵԱՆԸ: Թէ մանկավարժական և թէ առկօպֆին ինստիտուտում քաղաքացի Բոչարեանը սխտեմատիկօրէն զարգացրել և խորացրել է մեր երկրի ազդարարման կոնդրատեւեան ծրագիրը: Իր տեսական-քաղաքա-

կան յղւածներում արծարած մտքերը, իրրև ամբողջական կոնդրատեւեան կուլակիան լուչնորդիա, նա հրամցրել է մեր ինտուստարտութեանը: Տեղին է նշել, որ վերոյիշեալ ինտուստարտների կոմքլէքսները ժամանակին բաւարար պայքար չեն մղել կոնդրատեւեան հայեացքների պրոպագանդիստ Բոչարեանի դէմ:

«Տեղի սղութեան պատճառով այստեղ մենք հնարաւորութիւն չունենք խօսել նաև մի շարք ուրիշների մասին. ինչպէս օրինակ՝ մատերիալի գոյութիւնը ժխտող պրոֆէսոր Կամենցի (Անանիարտական Ինստիտուտ) և Ատոնու գոյութեանը հաստատող Փիլիկոս Անտուրի: Միայն անհրաժեշտ է շեշտել, որ մեր ըրոր ԲՈՒՀերում իշխանութեան ղեկավարն իղէսոր լուչնու դեռ ևս խիստ կերպով իրեն զգալ է տալիս:

Ի՞նչ նպատակ ունի այս այլանդակ արչաւանքը գիտութեան անկաշտ և անձնէլ սպասարները զէմ: Անկասկած, նպատակը «կազմակերպական եղբակացութիւններ» հանելն է, այսինքն՝ խղրի առարկայ գիտնականներին պարզապէս դպրոցներից դուրս շարտելը: Ինչի՞ր են հարկաւոր Հայաստանի համալսարանին Աճատեաններն ու Մանանդեանները, երբ Գիւլիբէսիվեանները կան...

Բայց «հակաիդալոիսական» ու «խորհրդային իշխանութեան թշնամ» մտաւորականները միայն դպրոցներում նստած չեն. Հայկոմկուսի քարտուղար Ա. Խանջեանը հաստատիացնում է, թէ կան և այնպիսի մտաւորականներ, «որոնք նստած Հողօրդոմատում, Պետպլանում և մի շարք այլ հիմնարկութիւններում, տեսականում թէ գործնական աշխատանքներում կանգնած են կապիտալիզմի ռեստավրացիային այս կամ այն ձևով սպասարկելու դիրքերի վրա»: Այդպիսիներից արդէն «հեռացեցին խորհրդային հիմնարկութիւններից Կամսարականը, Աւագրէկեանը, Շէկոպնիկեանը, Սերերբակեանը և ուրիշները» («Ձ» մայիս 15) — ըրորն էլ աչքի ընկնող մասնագէտներ, որոնք երկար տարիներ ծառայել են Հայաստանի տընտեսութեան: Իսկ առաջինը՝ Ստ. Կամսարականը, Հայաստանի, կարելի է ասել, լաւագոյն գիւլպատնտի մասնագէտը, նաև Հայաստանի երկրաշինարարական վարակառուցման հնգամեայ ծրագրի ղլխա: որ Հեղինակն է: Հիմա այդ մարդը զարձեւ է «կապիտալիզմի ռեստավրացիայի» պաշտպան: Խանջեանները յիմարութիւնը սահման ունի՞ արդեօք...

«Սակայն սրանով չի սահմանափակւում ինչի՞րը: Խանջեանը «պրոլետարական դոգմութեամբ ջննելով խորհրդային, սանաւանդ, կենտրոնական ապարատներն անձնական կազմը» պնդում է, որ կան «դեռ ևս բազմաթիւ պաշտօնականներ, որոնք իրենց իդէոլոգիայով ու էութեամբ ոչինչ ընդհանուր չունեն քանուր դասակարգի հետ, ըստ էութեան դէմ են սոցիալիզմի շինարարութեան, նեխած միջոցորտ են ստեղծում մեր խորհրդային հիմնարկներում, բայտասական ազդեցութեան ունենում նրանց մարտուստութեան, դոգմութեան վրա, ըստ էութեան մեր աշխատանքների համար արդելակների դեր են կատարում»: Ուստի «լրճնական հարւած» պէտք է ստանան այդպիսիները ու դուրս շարտելն խորհրդային հիմնարկութիւններից:

Խեղճ Հայաստանի մտաւորականութիւն:

Ն Ո Ր Հ Ր Դ Ա Յ Ի Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ց

Վերջերս արտաբանական փախած միանգամայն վտասանելի մի անձնատուրու թիւն հետեւալ տեղեկութիւններն է հարգողովման մեջ.

«... Խորհրդային աշխարհի դրութիւնը: Իսկապէս այս մասին կարելի է շատ բան գրել, բայց ինչքան ծանօթացայ արտասահմանի թերթերում գրածներին, կացութիւնը, չնչին բացատրութեամբ, ճիշտ է պատկերացած, թերեւ աւելի տգիտն ու մեղմ, քան որ իրականութիւնն է:

Բռնութիւնները անկարգաբերի են. ամէն դատարարի և խաբի մարդիկ ենթակայ են բռնութեան: Աքսորավայրերը, բանտերն ու կոնցենտրացիոնները բառիս ամենալայն իմաստով լեփ լեցուն են ու տեղ չկայ:

... արտուած ժամանակ սենսակի դժարութիւն ո՞վ գիտէր. ինչքան ատես կը ճարէր, շատ ատան գնով: Իսկ վերջին ժամանակներս եկող արտուականներին սենսակ չէինք կարողանում ճարել: Արդիւնաբերական և գիւղական կենսամթերքների պակասի մասին ասեն իսկ աւելորդ է. կատարեալ սով է:

